

ՄԱՐԶԻԿ

հսլս

مارزقك

مجلة رياضية شهرية
تصدرها جمعية الهومنتمن بيروت

marzig

SPORTS MAGAZINE

31րդ ՏԱՐԻ, 2012, ԹԻԻ 11-12 (365-366) - VOL. XXXI № 11-12

السنة الحادية الثلاثين - العدد 11 - 12

ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՍՔԱՆՉԵԼԻ ՀԱՄԱԽՄԲՈՒՄ



ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ 44-ՐԴ ՄԱՐԶԱՆԱՂԵՐ, ԱԻՍՏՐԱԼԻԱ

ՄԻՋ-ՎԱՐՉԱԿԱՆ ԴԻՒՆԱԿԱՆ 8-ՐԴ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ ՄԱՐՏԻՆ ԿԸ ԿԱՏԱՐՈՒԻ ՆԻԿՈՍԻՈՅ ՄԷՉ

Յ.Ա.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչության նախաձեռնությամբ, ընթացքի մեջ են միջ-վարչական դիւանական 8-րդ խորհրդաժողովին նախապատրաստական աշխատանքները: Խորհրդաժողովը տեղի կ'ունենայ Ջատկույան շաբաթը՝ 29-31 Մարտ 2013-ին, Կիպրոսի մայրաքաղաք Նիկոսիոյ մէջ: Նախորդ խորհրդաժողովը կատարուած էր չորս տարի առաջ, գրեթէ նոյն օրերուն, Փարիզի մէջ:

Խորհրդաժողովին իրենց մասնակցութիւնը կը բերեն միութեան Շրջանային եւ Մեկուսի շրջաններու վարչական կազմերու դիւանի անդամները, որոնք աշխատանքային նիստերով կը քննարկեն 2011-2013 երկամեակի գործունէութեան ընդհանուր պատկերը եւ իրազեկ կը դառնան 2013-2015 երկամեակի աշխատանքներու ընթացքին:

Խորհրդաժողովը իր օրակարգին վրայ կ'ունենայ շրջաններու եւ Յ.Ա.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան



գործունէութեան զեկոյցներու ներկայացում, գլխաւոր իրագործումներով եւ դիմագրուած դժուարութիւններով:

Ապա, Կեդրոնական Վարչութիւնը կը փոխանցէ Յ.Ա.Ը.Մ.ի ռազմավարական ծրագիրին գործադրութեան հանգրուանները, որմէ ետք խորհրդաժողովին մասնակիցները կը ծանօթանան յառաջիկայ երկամեակին համար Կեդրոնական Վարչութեան մշակած ծրագիրին.- համա-Յ.Ա.Ը.Մ.ական 9-րդ մարզախաղեր (Յուլիս-Օգոստոս 2013, Երեւան), սկաուտական խմբապետներու վերաորակաւոր-

ման դասընթացքներ (2013-ի ամառ), Արարատեան կարգ (2014), Համա-Յ.Ա.Ը.Մ.ական 10-րդ ընդհանուր բանակում (2014-ի ամառ, Բիւրական) եւ սկաուտական դասագիրքերու վերամշակում:

Օրակարգի նիւթ կը դառնան նաեւ Յ.Ա.Ը.Մ.ի 95-ամեակի տօնակատարութիւնները, Հայկական Ցեղասպանութեան 100-ամեակի ոգեկոչումները եւ «Մարզիկ» պաշտօնաթերթի աշխատանքները:

ՍՓԻՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԳՆԱՀԱՏԷ Հ.Ա.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄ ԵՂԲ. ԿԱՐԱՊԻՍ ԳԱՊԱՍԱԳԱԼԵԱՆԻ ԿՐԹԱՆՈՒԷՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ

13 Դեկտեմբեր 2012-ին, լիբանանահայ կրթական մշակներու, մամլոյ պատասխանատուներու եւ մշակութային միութիւններու ներկայացուցիչներու պարգեւատրման հանդիսութեան մը ընթացքին, Սփիւռքի նախարարութեան «Պատուոյ գիր»ի գնահատագիրին արժանացաւ Յ.Ա.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Կարապիս Գապասագալեան՝ կրթական իր բազմամեայ ծառայութիւններուն համար:

Պարգեւատրումը կատարուեցաւ Լիբանանի մօտ Հայաստանի դեսպանատան մէջ, արտակարգ եւ լիազօր դեսպան Աշոտ Քոչարեանի ձեռամբ, ներկայութեամբ շուրջ 40 հրրաւիրեալներու:

Յ.Ա.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչու-

թեան ատենադպիր եղբ. Կարապիս Գապասագալեանի կրթանըւեր գործունէութիւնը կ'երկարի աւելի քան 30 տարուան վրայ: Ան ուսուցչական ասպարէզ մուտք կը գործէ 1976-ին եւ կարճ ընդհատումներով կրթական իր ծառայութիւնը կը շարունակէ մինչեւ օրս:

Եղբ. Գապասագալեան պաշտօնավարած է Ս. Գրիգոր Լուսաւորիչ ճեմարանի (1976-1980), Մեսրոպեան Բարձրագոյն Վարժարանի (1977-1985), Գալուստեան Համապարփակ Վարժարանի (1980-1981), Ազգ. Էրամճեան Վարժարանի (1982-1985),



Հայ Աւետ. Շամլեան-Թաթիկեան Վարժարանի (1982-1985), Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքի (1985-1995) եւ Հայ Կաթողիկէ Հռիփսիմեանց Բարձրագոյն Վարժարանին մէջ (1998-2002 եւ 2004-էն մինչեւ այսօր):



Թիւիւն հիւն հիւն երը

MARZIG SPORTS MAGAZIN EDITED MONTHLY BY HOMENETMEN
 مارزیک مجله رياضية شهرية تصدرها جمعية الهومنتمن الرياضي



Մարզական ամսաթերթ
 Հրատարակութիւն՝ Հ.Մ.Ը.Մ.ի
 ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ


3107 ՏԱՐԻ, 2012, ԹԻ 11-12 (365-366)

ԽՄԲԱԳԻՐ
 Վիգէն Աւագեան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ
 Սեդա Պէշեան (Լիբանան),
 Սեւան Նազարեան (Ֆրանսա),
 Մարո Քէշիշեան (Արեւմտեան Մ.
 Նահանգներ), Յակոբ Խաչատուրեան
 (Արեւելեան Մ. Նահանգներ), Տիրան
 Շահինեան (Գանատա), Ռազմիկ
 Յովհաննիսեան (Հայաստան)

ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄ
 Պատրիկ Կիւլպէնկեան,
 Գրիգորիս Պողարեան,
 Արօ Մոսիկեան

Էջադրում - Արշօ Պալեան
 Գրաշարութիւն - Շողիկ Պոյաճեան
 Colour Separation - Photogravure Paklayan
 Կողքի Չեւաւորում - Տպագրութիւն



ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՑԷ
 Պուրճ Համուտ, ճինիշեանի Թաղ
 «Սեւան» Շէնք, Գ. Յարկ
 Հեռ: 01/248043, Fax: 01/260117
 E-mail: marzig@homenetmen.org
 P.O. Box: 80486 B. Hammoud, Lebanon

ՑՐՈՒՄ

Լիբանանի մէջ թերթին
 հատավաճառի սակն է 4000 Լ.ո.:
 Տարեկան բաժանորդագրութեան սակ
 ճշդուած է 48000 Լ.ո.:
 Լիբանանէն դուրս թերթին
 բաժանորդագրութիւնը
 կը կատարեն Հ.Մ.Ը.Մ.ի Մեկուսի
 եւ Շրջանային Վարչութիւնները:
 Թերթը ուղղակի Լիբանանէն
 կը ստացուի անձնական
 բաժանորդագրութեամբ
 (Տարեկան սակ՝ Միջին Արեւելեան
 եւ Եւրոպական երկիրներ \$70,
 Ամերիկա եւ Աւստրալիա՝ \$75):



26

Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԿԵԱՆՔ

- Խմբագրական 2
- Պատգամ 3
- Ակնարկ 4
- Յուշեր 6
- Մեր Տեսակցութիւնները 13
- Պատմութիւն 16
- Անդրադարձ 20
- Մասնաճիւղէ Մասնաճիւղ 24



28

ԲԱԺԻՆՆԵՐ

- Միջազգային 22
- Մանկապատանեկան 38
- Տարբեր Հայեացքով 40



30



33



ՄԵԲԱԳԱՅԻՆ ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ԳՐԱԿՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵՆ

ԹՈՂ ԳՈՐԾԵՆ

Իմաստուն հին խօսք մը կ'ըսէ. «Եթէ երիտասարդները գիտնային..., եթէ ծերերը կարենային...»: Առաջիններուն «գիտնային»ը փորձառութիւնն է, իսկ երկրորդներուն «կարենային»ը խանդավառութիւնն է: Երկուքը զիրար չեն փոխարիներ, զիրար կը լրացնեն:

Ծերերը փորձառութիւն ունին, բայց խանդավառութիւն չունին: Երիտասարդները խանդավառութիւն ունին, բայց փորձառութիւն չունին: Ո՞րն է կարելորդ կեանքի մէջ: Խանդավառութիւնը, անկասկած:

Փորձառութիւնը կուտակուած իմաստութիւնն է, բայց գործօն տարր չէ: Խանդավառութիւնը կուտակուած իմաստութիւնն է, բայց գործօն տարր է: Առաջինը ապահովագրութիւնն է սխալներու դէմ: Երկրորդը ապահովագրութիւնն է անգործօնութեան դէմ: Փորձառու մարդը նուազ կը սխալի, քան խանդավառ մարդը: Բայց խանդավառ մարդը աւելի գործունեայ կ'ըլլայ, քան փորձառու մարդը: Առաջինը կը մտածէ քայլ մը առնելէ *ետք*, երկրորդը կը մտածէ քայլ մը առնելէ *առաջ*:

Աւելի լաւ է սխալիլ, բայց գործել, քան թէ չսխալիլ, բայց չգործել: Այլապէս, գործելով կարելի է փորձառու դառնալ եւ ոչ թէ չգործելով: Կը հետեւի ուրեմն, որ երիտասարդներու խանդավառութիւնը կը նախընտրենք ծերերու փորձառութենէն: Ասիկա յարգանքի պակաս մը չէ ծերերու հանդէպ, որոնք ատեն մը գործած են, յաճախ իրենց խանդավառութիւնը միայն դրամագրուիս ունենալով: Ասիկա նաեւ յարգանքի յաւելեալ արտայայտութիւն մը չէ հանդէպ երիտասարդներուն, որոնք օր մը պիտի ծերանան անշուշտ եւ պիտի ուզեն իրենց փորձառութիւնը հակադրել երիտասարդներու խանդավառութեան:

Այս է ընդունուած կարգը հինէն ի վեր: Մենք բացառութիւն չենք:

Կը բաւէ որ յիշենք հայ մարմնակրթական շարժումին մեծ ռահվիրաները. Շաւարշ Քրիսեան 25 տարեկան էր, երբ կը հիմնէր «Մարմնամարզ» թերթը: Յովհաննէս Զինդլեան 23 տարեկանին կը դառնար Պոլսոյ եւ Իզմիրի հայ մարզական շարժումին շեփորահարը: Մինչ Գրիգոր Յակոբեան 27 տարեկանին հիմը կը դնէր հայ սկաուտական անդրանիկ շարժումին:

Երեքն ալ ծեր չէին: Փորձառու մարդիկ չէին: Ընդհակառակն, երեքն ալ երիտասարդ էին, զուրկ էին փորձառութենէ եւ իրենց խանդավառութիւնը միայն ունէին իբրեւ դրամագրուիս:

Քրիսեանի, Զինդլեանի եւ Յակոբեանի օրերուն ալ կային փորձառուներ, բայց կը գործեն երիտասարդները:

Այսօր, որոշ հակադրութիւն մը կայ ներկայի եւ անցեալի երիտասարդներուն միջեւ: Ներկայի երիտասարդները չունին անցեալի երիտասարդներուն գաղափարապաշտութիւնն ու զոհողութիւնը: Մեր օրերու պայմանները ստեղծած են աւելի հաճոյասէր, նիւթապաշտ եւ անձնակեդրոն նկարագիրով երիտասարդներ, որոնց համար տակաւին կանուխ կը թուի գաղափարներով, միութենականութեամբ եւ ազգով զբաղելու ժամանակը: Անոնք կը մտածեն, թէ օրը կու գայ այդ բոլորին:

Օրը սակայն չի գար, որովհետեւ այդ օրը այսօրն է: Ներկայն է: Վաղը կրնայ ուշ ըլլալ:

Յետեւաբար, միշտ եւ ամէնուր պէտք է կրկնել երիտասարդութեան կապուած մեր արդար սպասումը. այն՝ որ աւելի լաւ է, որ երիտասարդները փորձառու չըլլան, բայց գործեն, քան թէ փորձառու ըլլան եւ չգործեն: Թող սխալին, վնաս չունի, բայց թող գործեն: Միայն թէ խորհելով գործեն, ինչպէս պիտի ըսէր Գրիգոր Օտեան:

ԻՐԱԲՈՒՆՔԸ ՉՈՒՆԻՆՔ ԱՆՁՆԱՏՈՒԹԵԱՆ ԴՐՕՇ ՊԱՐԶԵԼՈՒ

(Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ
ԵՂԲ. ԳԱՌՆԻԿ ՄԿՐՏԻՉԵԱՆԻ ՈՂՋՈՅՆԻ ԽՕՍՔԸ՝ ԻՐԱՆԻ
ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ «ԱՐԱՐԱՏ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ
25-ՐԴ ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ)

Ուրախութիւնն եւ պատիւ է կանգնել Հ.Մ.Ա.Կ.ի 25-րդ Պատգամաւորական ժողովին դիմաց եւ ողջոյնի խօսք փոխանցել Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին անունով:

Ուրախութիւնը կը ծնի դարձեալ իրարու հետ ըլլալու, երկուքոյր կազմակերպութիւններու փորձառութիւնները կիսելու առիթէն:

Իսկ պատիւ է ըլլալ կազմակերպութեան մը մէջ, որուն բովանդակ կեանքը եղած է ծառայութիւն իր գաղութին, ծառայութիւն այն բոլոր արժէքներուն, որոնք հայութիւնն ու Հայաստանը կը նկատեն ամէն բանէ վեր:

Պատիւ է մեզի համար ըլլալ ձեր մէջ, որովհետեւ դուք մեզի հետ էք, մեր կողքին էք համա-Հ.Մ.Ը.Մ.ական բոլոր նախաձեռնութիւններու ժամանակ: Հետեւաբար, այս Պատգամաւորական ժողովին մեր ներկայութիւնը, փոխադարձ պարտաւորութեան մը սահմաններէն անդին, Հ.Մ.Ա.Կ.ի ազգանուէր գործունէութեան տրուած յարգանք մըն է Հ.Մ.Ը.Մ.ի կողմէ:

Ընթացիկ իմաստով, ժողով կ'ենթադրէ հաշուետուութիւն, քննարկում եւ ապագայ գործունէութեան նոր դաշտերու ճշդում: Այս պիտի ըլլար սովորական պայմաններու մէջ գումարուած ժողովի մը պարտականութիւնը: Բայց արդեօ՞ք մենք կ'ապրինք սովորական պայմաններու մէջ: Արտագաղթը, տնտեսական ահազին դժուարութիւնները, այլասերման եւ օտարացման երեւոյթները արտակարգ պայմաններ չե՞ն ստեղծած արդեօք: Իսկ արտակարգ պայմանները արտակարգ լուծումներ չե՞ն պահանջեր մեզմէ:

Մեր ետեւ ձգեցինք բաւական դժուար տարի մը: Բայց եւ այնպէս, մեծ գոհողութիւններու գնով մնացինք պատնէշի վրայ: Կազմակերպեցինք հայ սկառուտութեան հիմնադրու-

Յունուարին, Թեհրանի մէջ տեղի ունեցաւ Հայ Մշակութային «Արարատ» Կազմակերպութեան 25-րդ Պատգամաւորական ժողովը, որուն ներկայ գտնուեցաւ եւ ողջոյնի խօսք փոխանցեց Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան: Ստորեւ՝ եղբոր խօսքը:

Թեան 100-ամեակի ձեռնարկներ, յիշեցինք մեր անցեալը, որպէսզի դասեր քաղենք անկէ եւ ըստ այնմ ճշդենք մեր այսօրուան եւ վաղուան ընելիքը: Հ.Մ.Ա.Կ. 16 սկառուտներով իր մասնակցութիւնը բերաւ հայ սկառուտութեան 100-ամեակի բանակումին, Հայաստան:

Ամէնուրեք կազմակերպեցինք մարզախաղեր: Հ.Մ.Ա.Կ. եւս կազմակերպեց իրը, 44-րդ համահայկական խաղերը: Երիտասարդութիւնը ոգեւորուեցաւ եւ իր ոգեւորութեամբ նոր եռանդ տուաւ մեր գաղութներու կեանքին ու հայապահպանման գործին:

Սկառուտական եւ մարզական աշխատանքներու կողքին, ծաւալեցինք միութենական լայն գործունէութիւն, հայ պատանին ու երիտասարդը իր ազգային ինքնութեան կապուած պահելու նպատակով:

Այսպէս, մեր տեսակաւոր ձեռնարկները ծառայեցին գաղութներու մէջ հայեցի մթնոլորտը վառ պահելու եւ մեր երիտասարդութիւնը հայութեան եւ Հայաստանին առնչելու հրամայականին:

Իսկ այս բոլորը կատարուեցան կամաւոր աշխատանքով, անսակարկ նուիրութեամբ, բաւարար մարդուժի եւ նիւթականի շարժումով: Մենք գործեցինք, որովհետեւ գործելը մեր առաքելութիւնն է, հոսանքն ի վեր ընթանալը մեր պարտա-

Արդեօ՞ք մենք կ'ապրինք սովորական պայմաններու մէջ: Արտագաղթը, տնտեսական ահազին դժուարութիւնները, այլասերման եւ օտարացման երեւոյթները արտակարգ պայմաններ չե՞ն ստեղծած արդեօք: Իսկ արտակարգ պայմանները արտակարգ լուծումներ չե՞ն պահանջեր մեզմէ:

կանութիւնն է: Խոչընդոտները չեն տկարացներ մեր կամքն ու վճռակամութիւնը: Ժողովուրդը մեզի կը նայի եւ, մենք, Հ.Մ.Ը.Մ. եւ Հ.Մ.Ա.Կ., չենք կրնար, իրաւունքը չունինք անձնատրուութեան դրօշ պարզելու, մեր դժուարութիւնները պատճառաբանելով եւ պատնէշը լքելով:

Դժուարութիւններ միշտ եղած են ու պիտի ըլլան: Դժուարութիւնները փորձառութիւն կու տան մեզի, փորձառութիւնը՝ համբերութիւն, իսկ համբերութիւնը՝ տոկունութիւն մեր աշխատանքները ամէն գնով յառաջ տանելու:

Ու եթէ հարցը միայն ընթացիկ աշխատանքներու վերաբերէր տակաւին դիւրին ըլլար: Այսօր, մեր շուրջը կը զարգանայ նոր ձեւի կեանք մը՝ արհեստագիտական նորութիւններով լեցուն. երիտասարդութիւնը շատ արագ ներգրաւող կեանք մը, որ պատճառ կը դառնայ, որ նոր սերունդի անդամները հեռու մնան ազգային կեանքէ ընդհան-

Պործելը մեր առաքելութիւնն է, հոսանքն ի վեր ընթանալը մեր պարտականութիւնն է: Խոչընդոտները չեն տկարացներ մեր կամքն ու վճռակամութիւնը: Ժողովուրդը մեզի կը նայի եւ, մենք, Հ.Մ.Ը.Մ. եւ Հ.Մ.Ա.Կ., չենք կրնար, իրաւունքը չունինք անձնատրուութեան դրօշ պարզելու, մեր դժուարութիւնները պատճառաբանելով եւ պատնէշը լքելով:

րապէս եւ միութենական միջավայրէ յատկապէս: Ի՞նչ ընել եւ ի՞նչպէս ընել այս մարտահրաւէրը յաղթահարելու համար: Ահաւասիկ, բոլորս չարչրկող հարցումը:

Այսօր, հաւաքուած ենք հոս, այս բոլորին մասին յսելու եւ խօսելու:

Արդ, Հ.Մ.Ը.Մ-ի կեդրոնական վարչութեան ողջոյնի խօսքերուն հետ, ես պարտականութիւնը ունիմ փոխանցելու զօրակցութեան եւ աջակցութեան անկեղծ տրամադրութիւններ, որպէսզի ձեռք-ձեռքի տուած, իբրեւ քոյր կազմակերպութիւններ՝ Հ.Մ.Ը.Մ. եւ Հ.Մ.Ա.Կ. միասնաբար դիմագրաւենք մեր ժողովուրդին եւ երիտասարդութեան դէմ ցցուած դժուարութիւնները՝

Վասն աւելի պայծառ ներկայի,

Ի խնդիր փայլուն ապագայի:

ՀՊԱՐՏ, ԽՐՈԽՏ ՈՒ ՎՃՌԱԿԱՆ




մանաւանդ իր ներկայով, յաջորդական սերունդներուն կողմէ՝ ներշնչող քայլերգն ու հայոց դրօշը ձեռք-ձեռք փոխանցելու հաւատքով: Սփիւռքեան կեանքի դաժան պայմանները, մանաւանդ Եղեռնի յաջորդող տասնամեակները պատճառ չդարձան, որ աշխարհատարած այս կազմակերպութիւնը տկարանայ կամ ընկրկի: Մարմնամարզին աւրնթեր՝ հայապահպանում, հայակերտում, թուրքի մոլուցքին դիմաց մեծնալու, ապրելու իղձ, գաղթական խլեակներն ու հայահալած բեկորները որբութենէ դուրս բերելու եւ տունէն դպրոց, ակումբ, եկեղեցի, առաջնորդելու բնագոյով ցանուցիր տարագիր զանգուածները ոտաբոսիկ «բանակ»ի ու մտածող-զգացող-գործող հաւաքականութեան վերածելու իրագործում: Հանգրուանէ-հանգրուան՝ նոր մեկ-

Հ.Մ.Ը.Մ-ի տասնամեակներու պատմութիւնը իր ազգաչէն դերին ակնածանք պարտադրող ապացոյցը կը կազմէ, յանձնառութեան, պատասխանատուութեան զգացումներուն միախառնելով տոկալու եւ յարատեւելու ոգինբան մը, որ գրաւականը դարձած է Հ.Մ.Ը.Մ-ական բնորոշիչ դերին, իրագործումներուն, սերունդներու ազգակերտման իմաստին: Հ.Մ.Ը.Մ-ի եւ իր սկսուածութեան նպատակը միայն ծրագիր եղած չէ, այլ յատկանշուած է կենդանի գործի ապացոյցով եւ Սփիւռքի հայկական օճախներուն մէջ կենսախինդ դերով:

նակէտ, նուաճում, նուիրումով ու ճիգով, զրկանքին դիմաց՝ վսեմ դիմագրաւում, անխաթար հպարտութեամբ, թէկուզ կորաքամակ, թէկուզ հայահալած, թէկուզ տաժանքէն մէջքը ծռած, բայց հպարտ: Ահա՛, Հ.Մ.Ը.Մ-ի դաստիարակութիւնը եւ այդպէս ալ ձեւաւորուեցաւ «Բարձրացիր-բարձրացուր» տիեզերական նշանախօսքը վերածուեցաւ ազգային ինքնութեան կարգախօսի, «հայացուց ու հայացաւ» հայր գետեղելով պատնէշի վրայ, որպէսզի հայկական գաղութները ինքնավստահութեամբ պարուրուին, պաշտող ու պաշտպանող զօրքի վերածուին, հայ բազմութիւնները զրահուած նկարագիր զգենուն:

Այսօր, օտարութեան մաշեցնող պայմաններուն մէջ Հ.Մ.-

Ը-Մ- կը քայլէ՝ հետեւելով Հայաստանի ու Արցախի մեծ երազին: Հ-Մ-Ը-Մ- հայ կեանքին մէջ իրականութիւն մըն է: Փառքի կամ փառապատկաներու տիրանալու համար չէ որ հայրենիք հասաւ, այլ իր պատմութիւնը շարունակելու գոյամարտին մէջ մայր հողին վրայ ոտք կոխեց իր ծնունդին իտէլական սկզբնաղբիւրը հանդիսանալով:



Հ-Մ-Ը-Մ-ը հայրենիքին մէջ կը կազմակերպուի ու կազմակերպէ, կը պատրաստուի՝ պատրաստելու համար կը բարձրանայ՝ բարձրացնելու համար, հաւաքական կամքի ու պայքարի երազը կ'աճեցնէ՝ այդ երազով առաջնորդելու համար հայ նոր սերունդները պայքարի բոլոր քուրաններուն մէջ: Կազմակերպութեան կենսախայտ դերը կը խտացնէ իր շարքերը նոր միաւորներով ու մասնաճիւղերով:

Հ-Մ-Ը-Մ- կ'ապրի սերունդները ապրեցնելու համար: Հայրենիքի եւ Հ-Մ-Ը-Մ-ի իմաստներուն նոյնացումը որքան հարազատ հաղորդականութեամբ մը կը ներդաշնակուի այսօր, բոլոր ժամանակներէ աւելի, քանի իր մէջ կը պարփակէ համամարդկային եւ ազգային գաղափարներու գուգորդուած

նոյնացումէն բխող ապագայի յոյսը, արդարութեան եւ իրաւունքի գերագոյն արժէքները:

Հ-Մ-Ը-Մ- իր առաքելութեան դերը ամբողջացուցած չէ տակաւին: Պայմաններն ու կացութիւնները միշտ ալ նպաստաւոր եղած չեն իրեն համար: Բայց իր գործը աւարտելու ներշնչումը, հաւատքը՝ կա՛յ, խոստումը կա՛յ եւ նուաճումներու յոյսը պատմական նոր դարձակէտ մը բոլորելու յանձնառութեան կ'առաջնորդէ գինք: Ներշնչումը օրէնքի ոյժ ստացած է Հ-Մ-Ը-Մ-ի շարքերուն մէջ, կանոնազրային նեղ իմաստներէն ու չափանիշներէն դուրս:

Հայրենիքին մէջ ազգը կը ձեւաւորուի, Հ-Մ-Ը-Մ-ն ալ իր դիմագիծը կը կերտէ: Հայրենակերտումի գործընթացին մէջ, Հ-Մ-Ը-Մ- դերակատար պիտի ըլլայ համազգեստով կամ առանց անոր:

Ազգէն ստացածը ազգին նուիրելու հայրենախղճութեամբ, Հ-Մ-Ը-Մ- ջերմեռանդ ուխտով կ'արժեւորէ արժեւորումի արժանի խորհրդանիշներ ու սկզբունքներ: Կ'անցնի հպարտ, խրոխտ ու վճռական:

The Champs Élysées just steps away and the Parc Monceau nearby


HOTEL



PAVILLON MONCEAU
PARIS

Full of charme,
Tastefully decorated 36 rooms
and 6 suites with individual
heating / air conditioning,
direct access telephone line,
internet connection, minibar,
safety box and satellite TV.
Private bathroom with hairdryer.
The suites can accommodate
3 adults or a family
with parents and 2 children.

PAVILLON MONCEAU



43 rue Jouffroy d'Abbans 75017 Paris
Tel 331 56 79 25 00 - Fax 331 42 12 99 38

infos@pavillon-monceau.com
www.pavillon-monceau.com

ԽՈՂԵՐ ԵՒ ՅՈՒՇԵՐ Հ.Մ.Ը.Մ.Ի 95-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ

Միհրան Շիմշիրեան
ՊԵՅՐՈՒԹ

2 Մարտ 1969. 18-րդ Պատգամաւորական ժողովի
մասնակիցներ Հ.Մ.Ը.Մ.Ի Պէյրուսի ակումբին մէջ:



«**Մ**արգիկ» պաշտօնաթերթը այս
թիւով կը բոլորէ տարի մըն ար-
թերթը տարիով մը կը մեծնայ,
մինչ մենք տարիով մը աւելի
կը հարստանանք Հ.Մ.Ը.Մ.ա-
կան պատմութեամբ ու վաստակով: Կը հասնինք
միութեան 95-ամեակի տարին, ուր բոլորս հաշիւ
տալու պարտաւորութիւնը կը զգանք:

Հաշուետուութեան հետ մէկտեղ, բոլորուող
տարիները մեր մէջ կ'արթնցնեն անցեալի յիշատակ-
ներ, հեռաւոր պատմութեան կապուած մտորում-
ներ:

Հ.Մ.Ը.Մ.ի կազմութեան գաղափարը ծնունդ
կ'առնէր 1912-ին, սակայն հասկնալի պատճառնե-
րով այդ գաղափարը ձեւ ու մարմին կը ստանար 1918-ին: Եթէ
Յեղասպանութիւնը չըլլար, Հ.Մ.Ը.Մ. այսօր պիտի տօնէր իր
100-ամեակը, սակայն մեր ժողովուրդի ճակատագիրը այլ
բան պիտի տնօրինէր...

Միութեան առաջին աշխատանքը փոխանակ սկաուտու-
թիւնը եւ մարզական կեանքը ըլլալու, պիտի ըլլար որբախնա-
մը: Բոլորինը պիտի ըլլար այս միութիւնը եւ այդ պատճառով
ալ բոլորը պիտի ողջունէին զինք: Պոլսոյ Ազգային Կեդրոնա-
կան Վարչութեան Քաղաքական Ժողովը պիտի վաւերացնէր

իր ծրագիրը եւ Հ.Մ.Ը.Մ. պիտի արժանանար հանրային գուր-
գուրանքի:

Որբախնամը պիտի շարունակուէր նաեւ Սփիւռքի մէջ:
Որբանոցներու եւ գաղթակայաններու մէջ հասակ նետած սե-
րունդը ժամանակի ընթացքին խաղն ու սկաուտութիւնը պի-
տի հայացնէր: Պիտի կազմուէին Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղեր,
պիտի հիմնուէին ակումբներ, որոնց շուրջ միութենական աշ-
խոյժ գործունէութիւն պիտի ծաւալէր շուրջ կէս դար, մինչեւ
որ 1974-ին Հ.Մ.Ը.Մ. օտտուէր համագաղութային կառույցով
եւ աշխարհասփիւռ իր մասնաճիւղերը ղեկավարող
Կեդրոնական Վարչութեամբ:

1974-էն ասդին անցած են շուրջ 40 տարիներ,
որոնց 30-ը ապրած ենք, իբրեւ յաջորդական Կեդրո-
նական Վարչութիւններու անդամ եւ միութենական
զանազան պատասխանատուութիւններ ստանձնած
Հ.Մ.Ը.Մ.ական: Այսօր, երբ յետադարձ ակնարկ մը
կը նետենք յիշեալ 30 տարիներուն վրայ, չենք կրնար
չհպարտանալ բոլոր մակարդակներու վրայ միու-
թեան արձանագրած մեծ նուաճումներով:

1983-ին Հ.Մ.Ը.Մ. կը հաշուէր 15 հազար անդամ,
55 մասնաճիւղերով, այսօր անդամներուն թիւը հա-
սած է 26 հազարի՝ 104 մասնաճիւղերով: Միութիւնը
իր արժատները նետած է աշխարհի հինգ ցամաքա-
մասերուն մէջ՝ հեռաւոր Աւստրալիայէն մինչեւ
Ամերիկաներ, Եւրոպա, Ափրիկէ (ուր 2 մասնաճիւ-
ղեր կը գործեն Եգիպտոսի մէջ) եւ Ասիա:



10 Յունուար 1971. 19-րդ Պատգամաւորական ժողովի
մասնակիցներ Հ.Մ.Ը.Մ.Ի Պէյրուսի ակումբին մէջ:

1927-ին, Հայէպ-Պէյրութ Ֆուլթոնի խաղով սկսած միջ-մասնաճիւղային մրցումները այսօր արդէն վերածուած են համա-Հ.Մ.Ը.Մ.ական փառաւոր մարզախաղերու: Կատարուած են 8 մարզախաղեր:

Սկաուտութիւնը ապրած է մեծ վերելք՝ թիւով ու որակով: Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ. 15 տարիէ ի վեր մուտք գործած է Համաշխարհային Սկաուտական Շարժում: Իրագործուած են համա-Հ.Մ.Ը.Մ.ական 9 բանակումներ, որոնց 5-ը՝ անկախ հայրենիքի մէջ:

Կազմակերպական կեանքը, իր կարգին, արձանագրած է մեծ յառաջդիմութիւն: Մասնաճիւղերու թուական անհիմ հետ, ստեղծուած են միութենական գործունէութեան նոր դաշտեր, որոնք օրէ օր ընդլայնուած են Պատգամաւորական 10 Ընդհանուր ժողովներով եւ միջ-վարչական դիւանական 7 խորհրդաժողովներով:

Իրագործումները քիչ չեն, իսկ այդ իրագործումներու ետին կը կանգնին հոյլ մը նուիրեալներ, որոնք միութենական այս հսկայ աշխատանքը յառաջ տարած են ու կը տանին մեծ գոհողութեամբ, հաւատքով եւ առանց ակնկալութեան: Ահա թէ ո՛ւր փնտռել Հ.Մ.Ը.Մ.ի հզօրութեան գաղտնիքը. գոհողութեամբ, հաւատքով եւ առանց ակնկալութեան գործելու եղանակին մէջ: Գործել՝ պատրաստելու համար առողջ, գիտակից, դաստիարակուած ու պահանջատէր հայ մարդ, որ կարենայ պահել իր ինքնութիւնը, դիմագիծը: Մարդ, որ տէրը ըլլայ ազատ, անկախ ու միացեալ Հայաստանի տեսլականին:

Այս գործին համար Հ.Մ.Ը.Մ.ի յաջորդական Կեդրոնական Վարչութիւններու անդամները ոչինչ խնայած են իրենց ժամանակէն ու կարելիութիւններէն: Այսօր, կ'արժէ յիշել գէթ մեզմէ հեռացածները, անոնք որոնք հետք ձգեցին իրենց ետին եւ դարձան լաւ յիշատակ:

Նահատակ եղբ. Վարդգէս Տէր Կարապետեանը, որուն ջանքերուն շնորհիւ ամուր հիմերու վրայ դրուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի համագաղութային կառույցին: Ան եղաւ հիմնադիրը



Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան 1991-1995 քառամեակի կազմը:

այդ կառույցին եւ ջերմ պաշտպանը անոր հզօրացման համար թափուող ճիգերուն:

Նահատակ եղբ. Վարդան Բախշեանը, որ եղաւ Հ.Մ.Ը.Մ.ի հայրենական կառույցի հիմնադիրներէն մէկը: Ան իր կեանքը զոհեց Արցախի հերոսական պայքարին:

Եղբ. Վարուժան Մուրատեանը, մեղուաջան եւ լուռ աշխատանքի մարդը: Մէկը որուն անունը սերտօրէն կապուեցաւ «Մարզիկ» պաշտօնաթերթին, իբրեւ անոր խմբագիրը 1980-1994:

Եղբ. Երուանդ Տէմիրճեանը, մտաւորական, ճարտասան եւ «Մարզիկ»ի 77 խմբագրականներու հեղինակը:

Եղբ. Յարութիւն Գազանճեանը՝ Գեղարդը, մտաւորական, հիւմորի տէր, «Հարկը կը լուծէ օրէնքը» նշանաբանին հաւատացող ժողովականը:

Եղբ. Կարօ Թիւթիւնճեանը, սկաուտական աշխատանքներու մեծ երախտաւորը, միութենական գաղափարախօսութեան անշահախնդիր սպասարկուն:

Եղբ. տղթ. Միսաք Արզումանեանը, տարբեր տեսակէտներ համադրելու բացառիկ կարողութիւնը ունեցող լրջախոհ ատենապետը:

Եղբ. Յովհաննէս Տէր Յարութիւնեանը, ժողովական որոշումներու գործադրութեան բժախնդիր հետեւողը, խստապահանջ Հ.Մ.Ը.Մ.ականը:

Եղբ. Սուրէն Նազարեանը, Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբոյ ըսկաուտական շարժումին խորհրդանիշը:

Եղբ. Ժորժ Տաղլեանը, համեստ ժողովականը, Հ.Մ.Ը.Մ.ի Հարաւային Ամերիկայի կառույցին անձնագոհ նուիրեալը:

Եղբ. Ժիրայր Պոյաճեանը, մտաւորական կարողութիւններով օժտուած համեստ ժողովականը, Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու կառույցին ստեղծման վաստակաշատ եղբայրը:

Եղբ. Գէորգ Կարապետեանը, Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբոյ շրջանի անխոնջ ծառայողը:

Դէմքերու շարքը հոս վերջ չի գտներ: Մենք յիշեցինք վերջին 30 տարիներուն մեզի գործակից եղ-



Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան 1983-1987 քառամեակի կազմը:

բայրները միայն: Անոնց հետ, անոնց կողքին գործած ու անցած են բազմատասնեակ ուրիշներ, Շրջանային Վարչութիւններու եւ մասնաճիւղերու վարչութիւններու ներկայացուցիչներ, պարզ անդամներ, սկաուտներ եւ մարզիկներ, որոնց գործին եւ յիշատակին դիմաց ամենայն երկիւղածութեամբ կը խոնարհինք այսօր:

Անցեալի դէմքերը եւ անոնց գործը անցեալի յիշատակներ ոգեկոչելու համար չեն միայն, այլ՝ անցեալի վաստակով մեր ներկան արժեւորելու եւ ապագան ծրագրելու համար: Այսօր փոխուած են կեանքի պայմանները: Փոխուած են նաեւ մարդոց մտածելու եւ գործելու եղանակները: Նոր օրերու հետ, Հ.Մ.Ը.Մ-ի դէմ ցցուած են նոր մարտահրաւէրներ, որոնց յաղթահարման համար միութիւնը վերջին տարիներուն ձեռնարկած է ռազմավարական յատուկ ծրագրի մշակման:

Հ.Մ.Ը.Մ-ի 95-ամեակի սեմին եւ 100-ամեակի պատմական

Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան 1995-1999 քառամեակի կազմը:




թուականին նախօրեակին, ռազմավարական ծրագիրը միութիւնը նոր հունի մէջ դնող գլխաւոր միջոցն է: Այդ ծրագրին շնորհիւ միութիւնը պիտի կարենայ հզօր եւ արդիական կառոյցով թեւակոխել իր գործունէութեան երկրորդ դարը՝ 21-րդ դարու Հ.Մ.Ը.Մ-ը եւ Հ.Մ.Ը.Մ-ականը կերտելու համոզումով:

Պատրաստուինք ուրեմն 95-ամեակին, ճակատաբաց ներկայանալու համար 100-ամեակին:

«ՄԱՐԶԻԿ»ԻՆ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

- Սարգիս Ապրիմեան (Նիւ Երրզի) 300 \$
- Գարմէն Տէր Կարապետեան (Գալիֆորնիա) 100 \$



Elegance Plus

Shoes, Bags,
Fashion Accessories
& Gift Items

Bourj Hammoud - Dora - Armenia Street - Boyadjian Bldg.
Beirut - Lebanon
Tel. : 00961-1-248554, Fax : 00961-1-248556
Mob.: 00961-3-882811 - 00961-3-882812
E-mail: hratch@goldenmountains.com
hratchboy@hotmail.com

H. N. BOYADJIAN & CO.

Հ.Մ.Ը.Մ.Ի ԾԱԳՈՒՄԸ

(Հ.Մ.Ը.Մ.Ի 95-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ)

Երբ Լորտ Պէյտրն Փաուրը 1907-ին սկսեց լուծել հիմքերը, անոր անմիջական նպատակն էր պատրաստել գիտակից եւ օգտակար քաղաքացիներ: Անշուշտ ամէն ազգ կը փափաքէր այդ նպատակը իրագործել, սակայն կարգ մը ժողովուրդներ, որոնց կարգին՝ հայ ժողովուրդը, անոր անմիջական անհրաժեշտութիւնը կը զգային: Արդարեւ, սկսեցին լուծել իրենց սկսած իրենց պատանիին պիտի տար նկարագրի եւ ֆիզիքականի դաստիարակութիւն ու ճիշդ այդ էր որ կը պակսէր հայ ժողովուրդին:

Պոլսոյ մտաւորական դասակարգը, ըմբռնելով այս շարժման կարեւորութիւնը, առիթ պիտի ընծայէր սկստական խումբերու ստեղծման: Հետզհետէ սկսեցին լուծել պիտի գրաւէր ուշադրութիւնը հայ հասարակութեան, որ իր կարգին ականատես պիտի ըլլար նոյնպէս ուշադրաւ երեւոյթի մը՝ մարմնակրթանքին:

Նկատելով որ երկու շարժումներն ալ կը ձգտէին միեւնոյն նպատակին, հայ մտաւորականները յարմար նկատեցին սկստականութիւնն ու մարմնակրթանքը մէկտեղել մէկ դրօշի ներքեւ: Ահա այսպէս յառաջ եկաւ Հ.Մ.Ը.Մ.ը, որ ապագայ սերունդներու գլխաւոր կերտիչը հանդիսացաւ:

Քսաներորդ դարու առաջին տասնամեակին, հայ ժողովուրդը տակաւին կ'անցընէր զարթօնքի շրջան մը: Պոլիս Օսմանեան կայսրութեան մայրաքաղաքը ըլլալով, դարձած էր Թրքահայաստանի մշակութային կեդրոնը: Հետեւաբար, Պոլսոյ հայ հասարակութիւնը ականատեսը կ'ըլլար վերածնունդի վերաբերող բազմաթիւ երեւոյթներու, որոնցմէ մէկը կը հանդիսանար մարմնամարզը: Արդ, 1900-էն սկսեալ, Պոլսոյ մէջ ծնունդ առնել սկսած էին ֆուլթալի խումբեր, որոնց թիւը յա-



1921. Կ. Պոլսոյ Չաւեն Պատրիարքը միջ-որբանոցային ողիմպիական խաղերու ընթացքին:

րատել աճի մէջ էր: Սակայն մինչեւ 1908, մարզական կեանքը կը բնորոշուէր ֆուլթալիով ու քիչեր էին, որ ֆուլթալին հետ կը մշակէին մարմնակրթանքի այլ ճիւղեր:

Մարմնակրթանքի ընդհանրացումի հարցը օրուան դեկավարներուն գլխաւոր մտահոգութիւնը կը հանդիսանար: Միեւնոյն ժամանակ անոնց ջանքն էր իրենց հետեւորդներուն հասկցնել «մարզական ոգին»: Չէր բաւեր լաւ ֆուլթալի խաղալ, այլ պէտք էր նկարարգի կազմութիւն, վեհանձնութիւն եւ փոխադարձ յարգանք:

Այս բոլորը իրագործելու համար, հարկ էր ունենալ ուղղութիւն տուող անձ մը եւ այս մղիչ ուժը պիտի հանդիսանար լայն ընդունակութիւններով օժտուած երիտասարդ մը՝ Շաւարշ Քրիսեան:

Քրիսեան մարմնակրթանքի հանդէպի խոր համոզում ունեցող ու անոր անհրաժեշտութիւնը իբրեւ սկզբունք որդեգրող անձ մըն էր, որ ամէն ճիգ պիտի թափէր ազգին գաւակները



Կ. Պոլսոյ «Արաքս» ֆուլթալի խումբը:



1910. Կ. Պոլսոյ ֆուրսալի հայկական խումբերէն մէկը:

կրթելու: Գործակցութեամբ Գրիգոր Յակոբեանի, Հինդլեանի, Քաջունիի, Չերագի ու բազմաթիւ ուրիշներու, Շաւարշ Քրիսեան կը ձգտէր նոր ու խորունկ ակօս մը բանալ հայ մարմնակրթական շարժման մէջ:

Իր տեսակէտը տարածելու նպատակով, Քրիսեան, իր անմիջական գործակիցներուն օժանդակութեամբ, 1911-ի Փետրուարին կը հրատարակէր «Մարմնամարզ» պարբերաթերթը: «Մարմնամարզ»-ի հրատարակումով, հայ մարզական կեանքը կը մտնէր նոր փուլի մէջ: Առաջին թիւով իսկ Քրիսեան կ'արտայայտուէր. «Մեր նպատակը պիտի ըլլայ մարդ պատրաստել ու մարդեր են որ կը պակսին մեզի»:

Նոր ակումբներու հիմը դնելու կոչը ընելէ ետք, «Մարմնամարզ» փափաք կը յայտնէ կազմելու «Կեդրոնական Մարմնամարզական Ակումբ» մը՝ մարմնակրթանքը աւելի զօրաւոր հիմերու վրայ դնելու նպատակով: Այս կոչը լայն արձագանգ կը ստեղծէ ու 1911 Ապրիլ 8-ին «Մարմնամարզ»-ի խմբագրատան մէջ տեղի կ'ունենայ առաջին խորհրդակցական ժողովը: Ընդհանուր փափաքին վրայ, կ'որոշուի կազմակերպել մարզահանդէս մը. այս մարզահանդէսը կը նկատուի հայկական ողիմպիական խաղերու առաջինը:

Օրերու հետ արմատ ձգող մարմնակրթանքի շարժումը հանրութեան մէջ մեծ հետաքրքրութիւն կը ստեղծէր ու «Մարմնամարզ»-ի լոյս տեսնելէն վեց ամիս ետք, Պոլսոյ մէջ, լաւ կազմակերպուած խումբերու թիւը կը հասնէր տասնութի:

Այս խումբերուն բազմանալը որքան հաճոյք եւ գոհունակութիւն կը պատճառէր, նոյնքան մտահոգութիւն կու տար «Մարմնամարզ»-ի շրջանակին: Անհրաժեշտ էր, խումբերու ճիգերը աւելի արդիւնաւոր դարձնելու համար, իրագործել՝ զանոնք միացնելու կենսական խնդիրը: Որքան ակումբներու անջատ գոյութիւնը, նոյնքան գաւառներու անկազ-

մակերպ վիճակը կը մտահոգէր Քրիսեանը: Այս պատճառով ալ ան կը գրէր.

«Ցաւով ստիպուած եմ խոստովանիլ, թէ Պոլսոյ մէջ տակաւին կանոնաւոր հայ մարմնամարզական ակումբ գոյութիւն չունի, անշուշտ ակումբ բառը իր իսկական իմաստով նկատի ունենալով»:

Եթէ Քրիսեանի միտքը չարչրկողը ակումբներու անջատ վիճակն էր, անոր գլխաւոր մտահոգութիւնը երիտասարդութեան կազմակերպումն էր: Արդ, ան կը ձգտէր երիտասարդները մէկտեղել մէկ դրօշի ներքեւ, կարենալ կերտելու ապագայ խոհալ հայը: Ահա այս նպատակի գլխաւոր կերտիչները պիտի հանդիսանային Քրիսեանի որոշումով՝ «Նոր աղանդաւորները», այլ խօսքով՝ հայ սկաուտները:

Անգլիացի զօրավար Պէյտըն Փաուըլի սկաուտական շարժումին արձագանգը տակաւին եւրոպական բազմաթիւ երկիրներէ ներս չթափանցած, հայոց մօտ կը գտնէր լայն ընդունելութիւն: Ըմբռնելով այդ շարժման կարեւորութիւնը, «Մարմնամարզ» կը դառնայ այս շարժման գաղափարախօսականը ու Հինդլեան առաջինը կ'ըլլայ մեկնաբանելու սկաուտութիւնը: Բացատրելէ ետք այս գեղեցիկ շարժման իմաստն ու օգտակարութիւնը, կու գայ հետեւեալ եզրակացութեան.

«... Ես հիմա պիտի փափաքէի որ Պէյտըն Փաուըլի հիմնած սկաուտներու ակումբներու նման ակումբ մը հիմնելու ետեւէն չըլլաք, այլ ձեր բարքերուն մէջ մտցնէք այդ ձեռնարկին ոգին, որ կը հաւատամ թէ շատ յարմար է ազնուացնելու մեր ցեղը, եւ գիտենք թէ մեր ցեղը որքա՛ն պէտք ունի ազնուանալու»:

Հինդլեանի կոչը մեծ ազդեցութիւն կ'ունենայ հայ հասարակութեան մօտ ու շուտով փափաք կը յայտնուի սկաուտական խումբեր կազմելու: Շարժումը նախ կը սկսի դպրոցներէն ներս ու Հինդլեան-Մալաթեան Նոր Դպրոցը առաջին



1900-ականներու սկիզբ. Գոնիայի ճեմանեան վարժարանի սաները մարմնամարզութեան պահուէն:


Դպրոցը կ'ըլլայ սկաուտութիւնը քաջալերող, սակայն առաջին հայ սկաուտներու խումբը կազմած ըլլալու պատիւը կ'երթայ Սկիւտարի հայ երիտասարդութեան:

Օրէ օր, սկաուտութիւնն ու մարմնակրթանքը ալ աւելի կը խրախուսեն հայ երիտասարդութիւնը, ըլլայ Պոլիս, ըլլայ գաւառներու մէջ: Անշուշտ ղեկավարներու համար մեծ ուրախութիւն էր այս, որ ցոյց կու տար, թէ երեք տարի առաջուան գեղեցիկ ծրագիր թուելիք գաղափարները փաստօրէն իրականութեան վերածուած էին: Այս ըմբռնումով էր որ Շաւարշ Քրիսեան «Մարմնամարզ»-ի մէջ կը գրէր.

«Անձնական համոզումով, անհատական նախաձեռնութեամբ ու գաղափարին համակիր անձերու օժանդակութեամբ հիմնած ենք Հայ Մարմնամարզական Ընդհանուր Միութիւն եւ Հայ Սկաուտներ անուն կազմակերպութիւն մը: Առաջինը, գէթ իբր գաղափար բոլորովին նոր պէտք չէ ըլլայ մեր ընթերցողներուն... Երկրորդ շարժումը, թէի իբր գաղափար դեռ շատ նոր է մեզ համար, սակայն իրականին մէջ Հայ Մարմնամարզական Ընդհանուր Միութենէն տարբեր նպատակ չունի: Երկուքին ալ նպատակն է հայ ցեղի «բարոյական եւ ֆիզիքական ազնուացման աշխատանք»: Յետեւաբար, երկուքն ալ միջոցներ են եւ ոչ անջատ նպատակներ. ինքնին իրարու օժանդակ են»:



4. Պոլսոյ ֆութպոլի «Տորք» ակումբի խումբը: Կեդրոնը նստած Վահան Չերագ:



1921. 4. Պոլսոյ Չաւեն Պատրիարքին նամակը Հ.Մ.Ը.Մ.ին:

Այս խօսքերով, հայ մարմնակրթանքի յառաջապահ Շաւարշ Քրիսեան կեանքի կը կոչէր Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը եւ ինք պատրաստուած էր այդ անունով ողջունելու հայկական չորրորդ Նաւասարդեան ողիմպիականը, երբ պայթեցաւ համաշխարհային առաջին պատերազմը:

Պատերազմին հետեւեցան Մեծ Եղեռնը ու տեղահոսութիւնը. խորտակուեցաւ հայ երիտասարդութիւնը, փճացաւ մտաւորական սերունդը ու բազմաթիւ ուրիշներու շարքին՝ Շաւարշ Քրիսեան զոհ գնաց Ապրիլեան այդ ահաւոր Եղեռնին: Վրայ հասաւ գինադադարը ու այս անգամ ալ մէջտեղ եկան հազարաւոր որբերու եւ գաղթականներու կարաւանները:

Նկատի ունենալով հայութեան այս ահաւոր վիճակը, Քրիսեանի նախկին գործակիցներն ու անոր շունչով հասակ նետած երիտասարդները կ'որոշեն ոտքի կանգնիլ ու վերստին համախմբել պատանեկութիւնն ու երիտասարդութիւնը դրօշի մը ներքեւ: Պատերազմի յառաջացուցած ազգային մեծ աղէտին վրայ, անոնց դիւրին պիտի ըլլար արտասանել Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւն անունը, որովհետեւ նման կազմակերպութիւն մը անհրաժեշտ էր այդ օրերուն, որպէսզի իր թեւերուն տակ առնէր հայ պատանին, երիտասարդը, բայց մանաւանդ ծնողազուրկ հազարաւոր հայ որբերը:

Այս պատասխանատու գործին նախաձեռնողը պիտի հանդիսանար Քրիսեանի աշխատակիցներէն Գրիգոր Յակոբեան, որուն նպատակն էր ֆիզիքական կրթութեան հետ՝ այդ բազմաճազար որբերուն տալ ազգային գիտակցութիւն եւ այդ վերապրող խլեակները:



1922. Հ.Մ.Ը.Մ.ի մարզիկները անգլիացի նաւաստիներու մարզարարութեան մէջ:

ըէն կերտել նոր ՀԱ-
Յը: Այս համոզումով
է որ ան կ'որոշէ խոր-
հրդակցութեան կան-
չել մարզական ու ըս-
կաուտական շար-
ժումներու վեթերան-
ները, իրագոծելու
համար մարզանքն ու
սկաուտութիւնը մի-
ակ կազմակերպու-
թեան մը մէջ միացնե-
լու գաղափարը:

Գրիգոր Յակոբեա-
նի կոչը անպատաս-
խան չմնաց, ու 1 Նո-
յեմբեր 1918-ին տեղի
ունեցաւ պատմական
նիստը- ներկայ էին Հայկ Ճիգմէճեան, Տիգրան Խոյեան, Գարլո
Շահինեան, Լեւոն Յակոբեան եւ Սիրունի- բոլորն ալ կը բաժնէ-
ին Գրիգոր Յակոբեանի տեսակէտը: Առաջին նիստին իսկ,
մարմնակրթանքն ու սկաուտութիւնը միացուեցան մէկ դրօշի
տակ, իբրեւ լրացուցիչ մաս իրարու եւ այսպէսով ծնունդ
առաւ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը:



1921. Գուլէլիի Ազգային կեդրոնական
որբանոցին սկաուտական խումբը:

Ներկաներն են որ
կազմեցին Հ.Մ.Ը.Մ-ի
առաջին խարիսխը՝
իրբեւ կեդրոնական
Վարչութիւն, քանի
մը բացականեր մի-
ացնելով իրենց, ինչ-
պէս՝ Յովհաննէս
Հինդլեան, Ժ. Խորա-
սանճեան, Գ. Մերձա-
նօֆ: Շատ շուտով
Հ.Մ.Ը.Մ. ունեցաւ իր
նպատակը բացառ-
րող նշանաբան մը,
յանձին թուաբանա-
գէտ Պետրոս Ատ-
րունիի, որ յղացաւ
«Բարձրացի՛ր բարձ-

րացուր»ը:

Հաւատարիմ այս նշանաբանին, Պոլսոյ մէջ լայն ընդունե-
լութիւն գտած այս միութիւնը չմոռցաւ իր ազգակիցները,
կեդրոնական Վարչութիւնը բազմաթիւ առաքելութիւններ
ղրկեց գաւառ ու Անկախ Հայաստան՝ հոն եւս կազմակերպե-
լու մարզական եւ սկաուտական զոյգ շարժումները:

ARMENIA

for private and group trips

www.saberatours.fr

Saberatours Sevan Voyages

WITH THE COLLABORATION OF THE NEW AIRLINE COMPANY

Armavia
Արմավիա

Photos : © Yann Arthus-Bertrand/ La terre vue du Ciel. Licence 075 960031 Studio VICKEN 2005 PARIS

- Direct Flights
PARIS
YEREVAN
PARIS
- Select
your Journey
- Guided Tours
for 8 Days
or 12 Days

11, rue des Pyramides
75001 Paris
tel 331 42 96 10 10
fax 331 42 96 18 77
saberatours@selectour.com

48, cours de la Liberté
69003 Lyon
tel 334 78 60 13 66
fax 334 78 60 92 26
sevan@selectour.com

67, La Canebière
13001 Marseille
tel 334 95 09 30 60
fax 334 95 09 30 61
marseille@wasteels.fr

32-38, rue Hamrabadoutian
Yerevan
tel 374 10 52 55 55
fax 374 10 56 40 30
sabera@arminco.com

ՄԵՐ ՄԱՐԶԻԿՆԵՐԸ ՊԷՏՔ ԶԷ ՄՈՌՆԱՆ ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԻՐԵՆՑ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ


«ՄԱՐԶԻԿ» ԻՆ Կ' ԸՍԷ

Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ
ԱՆԴԱՄ ԵՂԲ. ԿԱՐՊՈՍ ԹՈՎՄԱՍԵԱՆ

Հարցազրույցը վարեց՝ Րաֆֆի Սիւլահեան
ՀԱԼԷՊ

սկսողական պատուոյ առաջին խումբին, որմէ ետք՝ 1966
թուականին մաս կազմեցի Փուլթպոլի ներկայացուցչական
խումբին:

Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական
Վարչութեան անդամ եղբ
Կարպիս Թովմասեան Հ.Մ.
Ը.Մ.ական ֆուրպոլի հան-
րածանօթ դէմքերէն մէկն
է: 1966-1981 ան մաս կազմած է Հ.Մ.
Ը.Մ.ի Հալէպի ներկայացուցչական
խումբին, նախ իբրեւ Բ. խումբի ան-
դամ (1966-1968), ապա իբրեւ Ա խում-
բի հիմնական մարզիկ ու խմբապետ
(1971-էն սկսեալ):



Եղբ. Կարպիս Հ.Մ.Ը.Մ.ին մաս կազմած է իբրեւ գայլիկ եւ
սկսուի: Ֆուրպոլիստի կեանքը սկսած է սկսուիական պա-
տուոյ առաջին խումբին հետ: Նախնական ուսումը ստացած
է Ազգ. Սահակեան Վարժարանը, որմէ ետք յաճախած է Քա-
րէն Եփփէ Ազգ. Ծեմարան: 1976 թուականին աւարտած է Հա-
լէպի պետական համալսարանին երկրաչափութեան ճիւղը:

Հ.Մ.Ը.Մ.ի մէջ ան սրանչնած է զանազան պաշտօններ.
1997-2001 թուական ընկրուած է Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանա-
յին Վարչութեան անդամ: Ապա, երեք տարի վարած է
Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի պետական վարչութեան արեւնապետու-
թեան պաշտօնը: 2008-ին արժանացած է Սուրիոյ Շրջանա-
յին Վարչութեան «Ծառայութեան» շքանշանին:

2011-ին, Հ.Մ.Ը.Մ.ի 10-րդ Պարգամաւորական Ժողովին,
եղբ. Կարպիս ընկրուած է Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչու-
թեան անդամ:

**Եղբ. Կարպիս, ի՞նչպէս մուտք գործած էք Հ.Մ.Ը.Մ. եւ ին-
չո՞ւ ընտրած էք Փուլթպոլի մարզաձեւը:**

- Ծնողքիս քաջալերանքով՝ չորս տարեկանիս Հ.Մ.Ը.Մ.ին
անդամակցեցայ որպէս գայլիկ եւ մասնակցեցայ 1955-ի տա-
րեկան աւանդական տողանցքին: Ապա, եղայ սկսող: Երջան մը
վերջ մարզական կեանքը հետաքրքրութիւն ստեղ-
ծելով եւ Փուլթպոլ խաղալու ձիրք ունենալով, մաս կազմեցի
սկսողական «Բարգէն Սիւնի» Փուլթպոլի խումբին, ապա՝

**Եղած էք Սուրիոյ յարձակողական դիրքի նշանաւոր խա-
ղացողներէն մէկը. ի՞նչ կը փոխանցէք ձեր մարզական օրերէն:**

- 1964-1981 մաս կազմած եմ Հ.Մ.Ը.Մ.ի Փուլթպոլի խում-
բերուն, որպէս յարձակողական դիրքի խաղացող: Տասը տա-
րի շարունակ ստանձնած եմ խումբին խմբապետութեան
պաշտօնը: Պաշտօնիս բերումով եղած եմ խստապահանջ,
կազմը միշտ Սուրիոյ լաւագոյն խումբերու կարգին պահելու
համար: Այդ շրջանին, մեր խումբի խաղացողներուն մեծա-
մասնութիւնը ճեմարանականներ էինք եւ մենք մեր մասնակ-
ցութիւնը կը բերէինք միջ-դպրոցական մրցաշարքներու ու
կը տիրանայինք Հալէպի ախոյեանութեան: Որպէս մարզիկ-
ներ, Փուլթպոլը մենք սիրելով կը խաղայինք, բայց միեւնոյն
ժամանակ մեր ուսումը կը շարունակէինք: Մեզմէ իւրաքան-
չիւրը այդ օրերուն հասաւ ուսման լաւագոյն դիրքերու: Իմ
լաւ խաղարկութեանս շնորհիւ, 1973-1974 թուականներուն



ընտրուած եմ Հալէպի լա-
ւագոյն Փուլթպոլիստ եւ
պարգեւատրուած եմ
մարզական Ֆետերասիո-
նին կողմէ: 1981 թուակա-
նին կատարեցի հրաժեշտի
մրցումս եւ շապիկս յանձ-
նեցի եղբ. Մանօ Տէր Ման-
ուէլեանին: 1982 թուակա-
նին, երեք տարի ստանձնե-
ցի առաջին խումբի մար-
զիչութեան պաշտօնը: Հե-
տագային, 1987-1988, դար-
ձեալ ինծի վստահուեցաւ
այդ պաշտօնը, որմէ ետք
ստանձնեցի պատասխա-
նատու այլ պաշտօններ:

Սուբիոյ հաւաքականին հետ մրցումներ կատարած էք:

- Այդ շրջանին մարզանքը սիրողական ասպարէզ մըն էր, եւ մենք որպէս մարզիկներ բոլորս ունէինք մեր անձնական գործերը եւ ուսումը: Զանազան առիթներով հրաւիրուած եմ Սուբիոյ ֆութպոլի հաւաքական եւ մասնակցած եմ անոր փորձերուն, բայց դժբախտաբար ուսմանս պատճառով չեմ կրցած մասնակցութիւնս բերել հաւաքականի մրցումներուն, ինչ որ նեղութիւն պատճառած է Սուբիոյ ֆութպոլի ֆետերասիոնին:



է, որ ժամանակը այդ կը պահանջէ, բայց ըսել չէ որ մեր մարզիկները պէտք է մոռնան միութենական իրենց պարտականութիւններն ու պարտաւորութիւնները: Պէտք է արժեւորեն իրենց կրած տարազը եւ աւելի լուրջ մօտենան խումբի փորձերուն, որպէսզի յաջող արդիւնքներ արձանագրելով, բարձր պահեն միութեան անունն ու վարկը:

Հ.Մ.Լ.Մ-ի Հալէպի մասնաճիւղին մէջ ստանձնած էք պետական վարչութեան ատենապետի պաշտօնը. ի՞նչպէս կ'արժեւորէք Հ.Մ.Լ.Մ-ական ֆութպոլը այսօր:

- Հ.Մ.Լ.Մ. միշտ պէտք է մնայ լաւագոյն դիրքերու վրայ, որովհետեւ մենք միայն մարզական միութիւն չէ որ կը ներկայացնենք, այլ՝ հալէպահայ գաղութը: Հալէպը մեծ գաղութ է եւ մենք պէտք չէ բաւարարուինք միայն սկաուտութեամբ: Մարզական խումբ մը լաւագոյն դիրքերու վրայ պահելը կը կարօտի հսկայ նիւթականի: Ճիշդ է, որ ժամանակի ընթացքին Հ.Մ.Լ.Մ-ի խումբերը շատ լաւ արդիւնքներ արձանագրած են, այսօր ալ կրնանք յաջողութիւններ արձանագրել՝ եթէ ապահովուին անհրաժեշտ միջոցները: Հիմնականը, պէտք է ունենայ մարզախաղերու դպրոցներ՝ պատրաստելու համար ապագայ մարզիկներ:

Ձեր ո՞ր մարզիչին կը պարտիք խաղարկութեան լաւագոյն դիրքերու հասնիլը:

- Ունեցած եմ քանի մը մարզիչներ, որոնցմէ իւրաքանչիւրը իր ազդեցութիւնը ունեցած է մարզական կեանքիս վրայ: Սկաուտական խումբի մարզիչս եղած է եղբ. Անդրանիկ Սիւլիւքեանը, որ միշտ քաջալերած է զիս: Առաջին խումբին մէջ եղբ. Վարուժան Երէցեանը օգտակար դարձած է ինծի:

Կրնա՞ք մեզի ներկայացնել ձեր մարզական կեանքէն յատկանշական դէպք մը:

- Հալէպի մէջ ճակատագրական մրցում մը կատարեցինք Տէր Զօրի «Ղազի» (այժմ «Ֆուլթուէ») խումբին հետ: Մրցումին անհրաժեշտ էր մեր յաղթանակը: Հանդիպումին 15-րդ վայրկեանին իրաւարարը փենսլթիի հարուածով մը պատճառ դարձաւ, որ մենք ստանանք առաջին կոլը: Ես որպէս խումբի խմբապետ բողոքեցի իրաւարարին եւ այդ պատճառով մրցումէն հեռացուեցայ կարմիր քարթով: Մրցումը դիտեցի արցունքոտ աչքերով: Կազմին մնացեալ խաղացողները չյուսահատեցան եւ հանդիպումը շարունակեցին մեծ թափով: Աւարտին, մենք յաղթեցինք 2-1 արդիւնքով, շնորհիւ Վարուժան Գոճանեանի հեռուէն նշանակած կոլին:



Ներկայ մարզիկները ինչո՞վ կը տարբերին անցեալի մարզիկներէն:

- Ներկայ մարզիկները կը կարծեմ որ եղած են աւելի նիւթապաշտ: Ճիշդ

Իբրեւ մարզաւանի շինարարական յանձնախումբի անդամ, ո՞ր հասած էին ձեր աշխատանքները վերջին դէպքերէն առաջ:

- Վերջին դէպքերէն առաջ, մարզաւանի շինարարութեան նախապատրաստական աշխատանքները հասած էին իրենց աւարտին եւ մենք ունէինք շինարարական աշխատանքներ:



րուն ձեռնարկելու բոլոր տուեալները: Անշուշտ, գծագրութիւնները ուսումնասիրւած են լաւ ձեւով եւ ստորագրուած են ֆետերասիոնին կողմէն: Ցարդ ունինք մինի ֆուլթայոլի դաշտ մը: Յառաջիկային, երբ երկիրը խաղաղի եւ բնականոն կեանքի վերադառնանք՝ պիտի սկսինք լողաւազանի շինարարութեան աշխատանքներուն եւ անոր մուտքերով պիտի կառուցենք ֆուլթայոլի մեծ դաշտ մը իր թրիպիւնով, պասքէթի եւ թենիսի դաշտեր, մարմնամարզի սրահ մը, հիւրանոց եւ ճաշարաններ: Մարգաւանը եթէ ամբողջանայ, պիտի ծառայէ ոչ միայն Հ.Մ.Ը.Մ-ականներուն, այլեւ բոլոր հալէպահայութեան:




www.aztagdaily.com
photo by Ashnag©

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ ըլլալը ի՞նչ պարտաւորութիւններու առջեւ կը դնէ ձեզ որպէս Սուրբոյ ներկայացուցիչ:

- Սուրբան որպէս մայր գաղութ, իր հինգ մասնաճիւղերով ունի մեծ թիւով անդամներ եւ համակիրներ: Ան իր աշխատանքով, սկստումներով եւ մարզիկներով միշտ ունեցած է իր խօսքը: Սուրբոյ մէջ ծառայած խմբապետներ եւ մարզիկներ ներկայիս կը ծառայեն աշխարհի տարածքին զանազան

շրջաններու մէջ: Նախպէս մենք ունեցած ենք եղբայրներ Խորէն Նազարեանը, Մանուէլ Հալլաճեանը եւ Գէորգ Կարապետեանը, որոնք եղած են Կեդրոնական Վարչութեան անդամներ, այսօր եւ շնորհակալութիւն յայտնելով բոլորին վստահութեան, պարտաւոր եմ կարելիա ի գործ դնել, լաւ ձեւով արժեւորելու համար ինձի վստահուած պարտականութիւնները:



- Full of Charme Hotel, New Construction, French Architecture, International Standards, 100 m from the Republic Square and 15 minutes from the Yerevan International Airport.
- 44 Rooms and 3 Suites with all comforts, all climate controlled, minibar, shower or bathroom with private WC, hairdryer. Satellite TV, international direct dial phone. Internet & Email access.
- Individualized and personal service, 24 hour reception and room service
- Bar




Feel at home, away from home...

Yerevan
32-38, Hanrabadoutian Street,
Yerevan 375010, Armenia
Tel 374 10 54 60 60 • Fax 374 10 54 60 50
sales@europehotel.am

Reservations

Studio YEREN 2005 P&MS

Հ.Մ.Ը.Մ.ի Հալեպի ակումբի պարտեզը:



ձեռնարկելնուն...: Ամէն միջոց գործադրուած է յաջորդ վարչութեան բաց չձգել...

«Վերջին երկու տարուան ընթացքին մասնաճիւղս ունեցած է երկու կանոնաւոր խումբեր: Ա. եւ Բ. խումբեր: Բարեկամական բազմաթիւ մրցումներէ ետք, վերջերս ունեցած ենք երկու կարեւոր մրցումներ, որոնցմէ պատուաւոր դուրս եկած ենք: Մէկը Հալեպի Մերձաւոր Արեւելքի որբերու «Աստղ» խումբին, իսկ միւսը դարձեալ Հալեպի Իւնիոն Սփորթիվի:

«Մասնակցած ենք միջ-մասնաճիւղային ախոյեանական մրցումներուն ու հանդիսացած ախոյեան:

«... Ողիմպիականներ չունեցանք... մարզիկ չունինք: Մարզիկներ ունենալու համար պէտք է ոյժ տրուի սկաուտական կազմակերպութեան: Մեզի համար ցաւոտ հարց մը եղաւ սկաուտական խնդիրը: Նախանցեալ տարի մեծ գոհողութիւններով 60 սկաուտներ պատրաստուեցան երդման արարողութեան: Ասոնց պատրաստութիւնը յանձնուած էր պրն. Յակոբ Աւագեանին... ասոնց զգեստաւորման համար մեծ ծախսեր եղած էին եւ որմէ մեծ բացը... երանի թէ գոհողութիւնը արդարացներ արդիւնքը. սկաուտ խմբապետին անհնազանդ գտնուիլը վարչութեան հանդէպ քայքայում յառաջ բերաւ սկաուտական շարքերէն ներս: Վերակազմելու փորձերը ճախողեցան: Վերջին տարին գայլիկներու համար չորս սկաուտ առաջնորդներ պատրաստեցինք:

«Պասքեթպոլի խումբեր կազմելու վրայ ենք... ունեցած ենք մուտք 526,58 լ. ոսկի, ելք 618,98 լ. ոսկի, բաց 92,40 լ. ոսկի» (Քաղուած՝ 28 Յունիս 1931-ի տեղեկագիրէն):

Մասնաճիւղերու տեղեկագիրներէն ետք, կը կարդացուի նաեւ Շրջանային Վարչութեան տեղեկագիրը, որուն մասին ժողովը կը հանէ սա բանաձեւը.

«Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ եւ Լիբանանի Շրջանային Վարչութեան մէկուկէս տարուան գոր-

ծունէութիւնը թէեւ յուսացուած արդիւնքը տուած չէ, սակայն, նկատի առնելով անոր նոր կազմուած ըլլալու հանգամանքը կը գրտնէ բաւարար եւ գոհացուցիչ» (Ատենագրութիւն Պատգամաւոր ժողովի, 28 Յունիս 1931):

Պատգամաւորական ժողովը կը քննէ օրակարգի հետեւեալ խնդիրները.՝ մեր կապը քոյր շրջաններու հետ, մեր վերաբերմունքը Ազգ. վարժարաններու հանդէպ, քարոզչութիւն, պաշտօնաթերթ, սկաուտական եւ մարզական տարագ, Ազգ. դրօշակի հարց, Հ.Մ.Ը.Մ.ը եւ ազգային տօները, տարեկան մարզահանդէս եւ բանակում, Կեդրոնական Վարչութեան կազմութիւն, մասնագէտ ունենալու հնարաւորութիւն, մեր դիրքը հայ մարզական միութիւններու հանդէպ, տեղական Ֆետերասիոնի խնդիր, սկաուտ վարիչ մը բերելու անհրաժեշտութիւն, հիմնադրամ գոյացնելու պէտքը, Շրջանային Վարչութեան վճարուելիք մասնաճիւղերու տարեկան սակը, նոր մասնաճիւղեր կազմելու աշխատանք: Հարցեր, որոնց կը տրուին համապատասխան որոշումներ, միշտ հիմնուելով Հ.Մ.Ը.Մ.ի ոգիին ու սկզբունքներուն վրայ:

«Շրջանային Պատգամաւորական ժողովը զբաղեցաւ նաեւ պատուակալ նախագահ մը ունենալու խնդրով, սկզբունքը քուէարկելէ ետք, միաձայնութեամբ իրրեւ պատուակալ նախագահ ընտրեց Գասպար Իփէկեանը եւ պարտականութիւն յանձնեց դիւանին իմացնելու ժողովին միահամուռ բաղձանքը»:

Օրակարգի հարցերու քննութենէն ետք, կը կատարուի Շրջանային Վարչութեան ընտրութիւն, որ կու տայ սա արդիւնքը՝ տոքթ. Ա. Պէզճեան, Հայկ Քալենտէր, Խորէն Սուքիասեան, Սիմոն Թերճանեան, Գէորգ Սագճեան, Ալպէր Յակոբեան, Սուրէն Բաբախեան:

«Շրջանային Պատգամաւորական ժողովը խանդավառութեամբ ընդունեց նորընտիր վարչութիւնը եւ այդ առթիւ հե-

1932. Հ.Մ.Ը.Մ.ի Հալեպի սկաուտները միջ-մասնաճիւղային հանդիպումներու ժամանակ նկարուած:



տեւեալ որոշումը յանձնեց վարչութեան-
եթէ որեւէ պատճառաբանութեամբ վարչու-
թենէն հրաժարողներ ըլլան, անոնց տեղ ընտ-
րել համեմատաբար առաւել քուէ ստացող-
ներ»:

Պատգամաւորները կը մեկնին իրենց շր-
ջանները Հ.Մ.Ը.Մ-ական ոգիի վերանորո-
գումով, տանելու իրենց ուսերուն ծանրա-
ցած քաղցր պարտականութեանց գիտակ-
ցութիւնը:

Շրջանային վարչութեան առաջին գործը
կ'ըլլայ տպագրել Պատգամաւորական ժողո-
վին աշխատանքները ու ղրկել մասնաճիւղե-
րուն: Տպագրել ու ղրկել նաեւ առաջարկ ան-
դամակցութեան թուղթերը եւ անդամա-
տետրները: Վաւերացնել նորընտիր վարչու-
թիւնները՝ Ալեքսանտրէթի, Թրիփոլիի, Հա-
լէպի ու Պէյրութի եւ Գամասկոս ղրկել Խորէն Սուքիասեանը,
Պէյրութի խումբին հետ, ներկայ գտնուելու Ֆուլթայոլի
մրցումներուն:

Պատգամաւորական ժողովէն անմիջապէս ետք, Պէյրութի
մասնաճիւղը իր անդամները կը հրաւիրէ ընդհանուր ժողովի,
ուր վարչութիւնը իր գործունէութեան տեղեկագիրը կը կար-
դայ, իսկ պատգամաւորներն ալ՝ իրենց գեկուցումը, որոնցմէ
ետք կ'ընտրուի նոր վարչութիւն մը հետեւեալներէ.՝ Յակոբ
Աճէմեան, Թադէոս Գարագալբաբեան, Մարտիրոս Ճամբու-
եան, Վահրամ Չոքբարեան, Կարօ Պատուհասեան, Պատրիկ
Տէր Պապեան, Ֆերտինանտ Քեհեայեան:

Նորընտիր վարչութիւնը իր երկրորդ նիստին իսկ, 7 Յու-
լիս 1931-ին, կը կազմէ ակումբի, Ֆուլթայոլի, մարզական եւ
լողի յանձնախումբերը: Հակառակ ամրոտան եղանակին,
Ֆուլթայոլիստներու դիմումին, վարչութիւնը կը ստիպուի
Ֆուլթայոլի բարեկամական մրցումներ կազմակերպելու մա-
սին մտածել, իսկ «անդամներուն մէջ խանդավառութիւն յա-
ռաջացնելու» համար, կ'որոշուի, Յուլիս 28-ին, «Ռաս Պէյ-
րութի աւագուտքին վրայ ունենալ գիշերային հաւաքոյթ մը,
ուր պիտի ըլլան հրավառութիւն, խրախճանք»: Նոյն ատեն
պատրաստութիւն կը տեսնուի անդամական արշաւ մը կազ-
մակերպել դէպի Չահլէ:

Այս բոլորէն աւելի սակայն, մտահոգութեան պատճառ էր
Ֆուլթայոլի դաշտին պարագան, գոր գրաւած էին Փրանսացի-
ները: Վարչութիւնը օրինական որեւէ քայլ առնելէ առաջ, կը
գրէ Շրջանային վարչութեան. «Միութեանս մարզադաշտին
գրաւումը Փրանսական զինուորներու կողմէ կատարուած
իրողութիւն է: Երէկ ստացանք համապատասխան թուղթերը:

«Վարչութիւնս այս ծանր հարուածը կրելէ ետք, որեւէ
պատասխանատու քայլ առած չէ, կը փափաքի խորհրդակցա-
կան ժողով մը ունենալ պատուարժան վարչութեանդ հետ ուր
եւ որոշել ձեռք առնելիք միջոցները»: Խորհրդակցական ժո-
ղովէն ետք, վարչութիւնը օրէնքի դիմելով հանդերձ, կ'որոշէ
նոր դաշտ մը փնտռել, պատրաստ գտնուելու ժխտական ար-
դիւնքի մը պարագային:

Թրիփոլի խաղաղ հունի մէջ ինկած կը հետամտի ներքին



Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի 1928-1929
տարեշրջանի ֆուլթայոլի խումբը:

աշխատանքի՝ խաղ, ակումբ, լսարան իր օրակարգի գլխաւոր
հարցերն են, իսկ Ալեքսանտրէթ, ուր արդէն կազմուած էր
մասնաճիւղ, իր 26 Յունիս 1931 թուակիր նամակով պաշտօ-
նապէս կը գրէ Շրջանային վարչութեան:

«Այս նամակով կը փութանք Ձեզ յայտելու, որ 1931 Յու-
նիս 9-ին, տեղւոյս մէջ հիմնեցինք Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղը,
քանի մը երիտասարդներու նախաձեռնութեամբ: Առաջին
իսկ առիթով արձանագրուեցան 39 անդամներ, որոնք կազ-
մութեան օրն իսկ, գաղտնի քուէարկութեամբ, ընտրեցին եօ-
թը հոգիէ բաղկացած վարչութիւն մը: Այդ եօթը հոգիներն
են՝ Յակոբ Քէշիշեան, Մանուկ Պալեան, Պարգեւ Շամլեան,
Լուիսֆիկ Շամլեան, Արմենակ Յ. Պալեան, Արմենակ Լ. Պալ-
եան, Լուիսֆիկ Մախեան:

«Մինչեւ օրս գումարուած վարչական եւ ընդհանուր ժո-
ղովներու ընթացքին, միութեանս անդամներուն թիւը բարձ-
րացած է 78-ի: ... Պիտի խնդրէինք, որ պատուարժան վարչու-
թիւնդ բարի ըլլար մեզ վաւերացնելու որպէս մասնաճիւղ ու
քաջալերէր»:

Հալէպ, տակաւին պատգամաւորական ժողովի չգացած՝
ընտրած էր իր վարչութիւնը: Վարչութիւնը իր կարգին նշա-
նակած էր թենիսի, սկաուտական, դաշտի, ողիմպիական
յանձնախումբերն ու վարչութեան կողքին աշխատող խորհրդ-
դատու մարմինը:

Հալէպ, գործերու գեղեցիկ բաժանումով, իր ենթամար-
միններով, կը տանի ոչ միայն տեղական գործ, այլ նաեւ՝
շրջաններու: Ան իր աշխարհագրական դիրքով մօտ ըլլալով
Լաթաքիոյ, Ալեքսանտրէթի եւ վերջերս կազմուած Քըրք-Խա-
նի մասնաճիւղերուն, կը փութայ հասնիլ անոնց պահանջնե-
րուն՝ գրեւորական պիտոյք, տպագրական գործ ու կնիք,
սկաուտական գոյք եւ Ֆուլթայոլիստներու կօշիկ, գուլպայ,
շապիկ ձամբելով, մանաւանդ կը ջանայ ի գին նիւթական գո-
հողութեան քաջալերելու մօտիկ վայրերու խումբերը, ինչպէս
Լաթաքիոյ խումբին Հալէպ գալուն, իր արդէն վտիտ գանձէն
կը գոցէ երթեւեկի եւ այլ ծախսերու բացը:

(Շար.3)

Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԲՈԼՈՐ ՆՆՋԵՑԵԱԼՆԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Հալատալով մեզմէ անվերադարձ բաժնը լողներուն յարգանքի տուրք տալու պարտաւորութեան, աւանդութիւն դարձաւ, որ ամէն տարուան Նոյեմբերին Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի ընտանիքը ոգեկոչէ յիշատակը մեզմէ յաւէտ բաժնուած ննջեցեալ բոլոր Հ.Մ.Ը.Մ.ականներուն՝ ըլլան անոնք սկաուտ, մարզիկ թէ վարչական գործունէութիւն տարած անդամ-անդամուհիներ, որոնք ժամանակ մը առաջ մեզի հետ էին, կը գործէին Հ.Մ.Ը.Մ.ի շարքերուն մէջ, Հ.Մ.Ը.Մ.ի համար: Վստահաբար, եթէ մեզի հետ ըլլային այսօր, անոնք անվարան պիտի շարունակէին իրենց անսակարկ նուիրումը բերել այս անգուղակի միութեան:

Անոնք անցեալին գործած անմահներ են, որոնք համոզուած միութեան վեհ գաղափարին, գործեցին ու անցան:

Գործեցին անհաշիւ, տուին առանց սակարկելու եւ մինչեւ իրենց վերջին շունչը նուիրուեցան Հ.Մ.Ը.Մ.ի վսեմ գաղափարին եւ անոր յատուկ «Բարձրացիր-բարձրացուր» նշանաբանին:

Իրերայաջորդ սերունդներու գաւակներ իրենց տասնեակ տարիներու վաստակը ունեցան այս միութեան ուռձացման ու վերելքին մէջ. միութիւն մը, որ բազմանալով ու ծլարձակելով՝ աշխարհի տարածքին, դարձաւ 104 ճիւղերով անթառամ ու հաստարուն ծառ մը:

Չենք կրնար մոռնալ յիշատակը այն բոլոր մարզիկներուն,

Տարեկան իր սովորութեան համաձայն, Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի ընտանիքը հոգեհանգրստեան պաշտօնով մը յարգեց մեզմէ յաւէտ բաժնուած Հ.Մ.Ը.Մ.ականներուն յիշատակը:
Այս առիթով, Շրջանային Վարչութիւնը հրապարակեց խօսք մը, զոր կը ներկայացընենք ստորեւ:

որոնք երկար տարիներ քրտինք թափեցին մրցումի դաշտերուն վրայ՝ բարձր պահելու համար միութեան դրօշը:

Ինչպէ՛ս չյիշել այն վարչական քոյրերն ու եղբայրները, որոնք իրենց անձն ու եսը գոհեցին՝ զրկուելով անձնական հաճոյքներէ. ժամանակ տրամադրեցին ծրարագրելու եւ իրագործելու համար

լաւագոյնը՝ ի նպաստ միութեան եւ յաջորդ սերունդներուն:

Ինչպէ՛ս մոռնալ կակուղ-թաթիկէն մինչեւ շեփորախումբերու անդամները, սկաուտական բարձրագոյն դիրքերու վրայ գործած մեր քոյր-եղբայրներն ու պատասխանատուները, որոնք անշահախնդիր մօտեցումով սկաուտական այբուբենը սորվեցուցին նորեկներուն, հպարտօրէն տողանցեցին հայկական թաղերու մէջ եւ Մայիսեան փառատօններու ընթացքին հպարտութեան ու հրճուանքի պահեր նուիրեցին հայութեան:

Այո՛, ինչպէ՛ս մոռնանք այն Հ.Մ.Ը.Մ.ականը, որ մահուան սնարին իսկ կը հետաքրքրուի Հ.Մ.Ը.Մ.ի մարզական լուրերով, կամ՝ այն մարզիկը, որ իր հեծանիւր մէկ կողմ դնելով կ'երթայ նահատակուելու Ղարաբաղի լեռներուն վրայ:

Այս բոլորը պարտք կը դնեն մեր վրայ ոգեկոչել յիշատակը բոլոր անոնց, որոնք նուիրուեցան Հ.Մ.Ը.Մ.ին ու գործեցին ի խնդիր այս մեծ միութեան:

Կ'ողբանք հին թէ նոր մահացած Հ.Մ.Ը.Մ.ական բոլոր քոյրերուն ու եղբայրներուն կորուստը անխափր եւ կ'ոգեկոչենք անոնց վառ յիշատակը՝ յիշելով մանաւանդ վերջին շրջանին մեզմէ բաժնուած եղբայրներ Վարդգէս Հայրապետեանը, Պօղոս Յովհաննէսեանը, Յովհաննէս Ծատուրեանը, Յակոբ Գալայճեանը, Վահագն Յովհաննէսեանը եւ Վարդգէս Ծատուրեանը:

Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութիւնը կը խոնարհի ննջեցեալ բոլոր Հ.Մ.Ը.Մ.ականներու՝ ամենահամեստ մարզիկէն ու սկաուտէն մինչեւ յանձնախումբերու թէ վարչութիւններու մաս կազմած եւ դիրքերու վրայ գործած ու անցած քոյրերուն ու եղբայրներուն յիշատակին առջեւ:

Խունկ ու մոմ անոնց անմահ ու անմոռաց յիշատակին:



ԱՌ Ի ՅՍՏԱԿԱՅՈՒՄ

Պատուարժան խմբագրու թիւն «Մարզիկ» պաշտօնաթերթի,

«Մարզիկ»-ի 2012 տարուան թիւ 6-ին մէջ, «Մեր կորուստները» բաժինով կարդացինք Յ.Պ.Վ. ստորագրութեամբ եւ «Եղբ. Պօղոս Յովհաննէսեանի յիշատակին վկայութիւն մը» վերնագրով յօդուած մը, որուն վերջին պարբերութիւնը ապշանք ու զարմանք պատճառեց մեզի:



Մրցումներու աւարտին (որոնք տեւեցին ամբողջ օր մը), տեղի ունեցաւ մետալներու բաշխում բոլոր մասնակիցներուն, ինչպէս նաեւ՝ յուշանուէրներու փոխանակում եւ բաժակներու տուղութիւն յաղթական մարզիկներուն, ձեռամբ Շրջանային Վարչութեան ատենապետին եւ անդամներուն: Օրին, Շրջանային Վարչութիւնը մամուլով կատարեց մրցաշարքին լրատուութիւնը:

Պարբերութիւնը հետեւեալն էր.-

«Բայց նաեւ ափսո՛ս, որ իր աշակերտներէն ոչ մէկը անդրադարձաւ իր մասին: Միայն «Մարզիկ» գուժեց անոր մահը եւ մահագրութեամբ մը ծանօթացուց գայն նոր սերունդին»:

Այո՛, ապշանք ու զարմանք պատճառեց այս հաստատումը մեզի, որովհետեւ.-

ա) Եղբ. Պօղոս Յովհաննէսեան 9 Յունիս 2011-ին մահացաւ Յրանսայի Վալանս քաղաքին մէջ եւ 10 Յունիս 2011-ին, Հ.Մ.Լ.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան նախաձեռնութեամբ (որուն մաս կը կազմէ իր աշակերտներէն եղբ. Բաֆֆի Մունջօղլեան), էշրէֆիէի Ս. Յակոբ եկեղեցու մէջ տեղի ունեցաւ հոգեհանգստեան յատուկ արարողութիւն՝ եղբ. Պօղոսի յիշատակին: Արարողութեան ներկայ գտնուեցան Հ.Մ.Լ.Մ-ի Շրջանային եւ մասնաճիւղերու վարչութիւններու անդամներ, Հ.Մ.Լ.Մ-ի փինկ-փոնկի խումբերու մարզիկ-մարզիկուհիներ, Լիբանանի փինկ-փոնկի Ֆետերասիոնի նախագահն ու անդամները:

բ) Յունիս 10-ին, Հ.Մ.Լ.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութիւնը եղբ. Պօղոս Յովհաննէսեանի մահը գուժեց «Ազդակ» օրաթերթով:

գ) Լիբանանի փինկ-փոնկ Ֆետերասիոնը (տեղեակ պահելէ ետք եղբ. Բաֆֆի Մունջօղլեանի միջոցով, որ փոխ նախագահն է յիշեալ Ֆետերասիոնին) իր կարգին գուժեց եղբոր մահը լիբանանեան մամուլով:

դ) Կիրակի, 24 Յունիս 2012-ին, նախաձեռնութեամբ եղբ. Բաֆֆի Մունջօղլեանի, կազմակերպութեամբ Հ.Մ.Լ.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան եւ հսկողութեամբ Լիբանանի փինկ-փոնկի Ֆետերասիոնին, «Աղբալեան-Հ.Մ.Լ.Մ.» մարզամշակութային համալիրին մէջ տեղի ունեցաւ փինկ-փոնկի միօրեայ մրցաշարք մը՝ նուիրուած եղբ. Պօղոս Յովհաննէսեանի յիշատակին: Մրցաշարքը բաժնուած էր երեք դասակարգերու: Մրցումներուն մասնակցեցան 78 երկսեռ մարզիկներ:

Յաջորդ օրն իսկ մրցաշարքին լայնօրէն անդրադարձան «Ազդակ» օրաթերթը եւ լիբանանեան արաբատառ մամուլը:

ե) 23 Յունիս 2011-ին, եղբ. Պօղոս Յովհաննէսեանի մահուան քառասունքին առիթով, Հ.Մ.Լ.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութիւնը «Ազդակ» օրաթերթին մէջ տրուած յօդուածով մը անդրադարձաւ եղբ. Պօղոս Յովհաննէսեանի կորուստին («Հ.Մ.Լ.Մ-ական եղբայր մը ստորագրութեամբ»):

զ) Մահացած կամ նահատակուած Հ.Մ.Լ.Մ-ականներու յիշատակին աւանդական դարձած եւ ամէն տարուան Նոյեմբեր ամսուան մէջ կատարուող հոգեհանգստեան յատուկ արարողութենէն ետք, Շրջանային Վարչութիւնը մահացած այլ եղբայրներու շարքին յիշեց եղբայրներ Պօղոս Յովհաննէսեանի եւ Վահագն Յովհաննէսեանի անունները (տեսնել «Ազդակ», 24 Նոյեմբեր 2012):

Կ'ուզենք յայտնել նաեւ, որ 31 Յունուար 2012-ին մահացած եղբ. Վահագն Յովհաննէսեանի մահը Շրջանային Վարչութիւնը գուժեց «Ազդակ»ով: Եղբ. Վահագն Յովհաննէսեանի յիշատակին կազմակերպուեցաւ փինկ-փոնկի յատուկ մրցաշարք մը եւ եղբ. Բաֆֆի Մունջօղլեանի ջանքերով փինկ-փոնկի Ֆետերասիոնը տարիքային ախոյեանութեան բաժակը նուիրեց եղբ. Վահագն Յովհաննէսեանի անունին:

Աւելցնենք նաեւ, որ մամուլով լոյս տեսած բոլոր գրութիւնները պատճենահանուելով յանձնուեցան եղբ. Պօղոս Յովհաննէսեանի Լիբանան ապրող հարազատներուն:

Այս բոլոր յստակացումներէն ետք, կը յուսանք, որ գոհացած ու բաւարարուած կ'ըլլայ Յ.Պ.Վ. յօդուածագիր եղբայրը, որ իրերայաջորդ Շրջանային Վարչութիւնները չեն մոռցած ու չեն մոռնար անցեալին գործած ցենզաւոր բոլոր Հ.Մ.Լ.Մ-ականները:

Հ.Մ.Լ.Մ-Ի ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

«ՉԵՄՓԻԸՆԶ ԼԻԿ»Ը Բ. ՀԱՆԳՐՈՒՄՆԻ ՍԵՄԻՆ

Գ. Թորոյեան ՊԵՅՐՈՒԹ

«**Չ**եմփիընզ Լիկ»ի առաջին հանգրուանը, որ սկսած էր 8 Սեպտեմբեր 2012-ին, աւարտեցաւ 5 Դեկտեմբերին: Մրցող խումբերէն 16-ը անցան Բ. հանգրուան. ութը խումբեր իրաւունքը ստացան մասնակցելու «Եուրօ Լիկ»ի մրցաշարքին, իսկ ութը այլ խումբեր հրաժեշտ տուին եւրոպական մրցաշարքերուն:



Առաջին հանգրուանի մրցումներուն արձանագրուեցան երկու անակնկալներ: Անցեալ տարեշրջանի ախոյեան Չելսին չյաջողեցաւ անցնել Բ. հանգրուան: Իր խմբակին երրորդ դիրքը գրաւելով ան պիտի մասնակցի «Եուրօ Լիկ»ի մրցումներուն: Մինչ Անգլիոյ ախոյեան Մանչեսթըր Սիթին դուրս մնաց ամբողջութեամբ եւ ոչ մէկ յաղթանակ արձանագրեց:

Ա. խմբակի մրցումներուն, Փարիզ Սէն ժերմէն եւ Փորթօ դժուարութիւններու առջեւ չգտնուեցան: Անոնք յաղթանակէ յաղթանակ սուրալով ապահովեցին Բ. հանգրուանի իրենց տոմսը: Տինամօ Բիել յուսախաբ ըրաւ իր համակիրները եւ գրաւեց երրորդ դիրքը, մինչ Տինամօ Զադրէպ ոչ մէկ յաղթանակ արձանագրեց:



Բ. խմբակին մէջ ամէնէն տկար կազմը Մոնփրիէն էր: Մրցակցութիւնը սուր էր Շալքէի, Արսենալի եւ Օլիմպիաքոսի միջեւ: Առաջին երկուքը շնորհիւ իրենց տոկոսութեան եւ փորձառութեան կարողացան գերազանցել յոյները եւ անցնել Բ. հանգրուան:

Գ. խմբակին անակնկալը ըՄպանիոյ Մալախան էր: Ան ոչ միայն անցաւ յաջորդ հանգրուան, այլեւ՝ գերազանցելով Ա. Սէ. Միլանի կամ Չենիթի նման կազմեր գրաւեց խմբակին առաջին դիրքը: Չենիթ եւ Միլան պայքարեցան Բ. դիրքին տիրացման համար եւ իտալացիք կարողացան միմիայն մէկ կէտի առաւելութիւն ձեռք բերել: Մինչ Պելճիքայի Անտրլէխթը փորձեց բաներ մը ընել, սակայն ըստ երեւոյթին տակաւին կանուխ է:

Դ. խմբակին մեծագոյն պարտելը Մանչեսթըր Սիթին էր: Ան ոչ մէկ յաղթանակ արձանագրեց: Գերմանիոյ Տորթմունտը ամէնէն ինքնավստահ եւ ամէնէն լաւ արդիւնքները արձանագրողն էր: Մատրիտի Ռէալը պահ մը երերաց, սակայն կարողացաւ գրաւել Բ. դիրքը: Ամսթերտամի Այաքսը յաջողեցաւ յաղթել միայն Մանչեսթըր Սիթիին, ինչ որ բաւարար էր Բ. հանգրուան անցնելու համար:

Ե. խմբակին մէջ երեք խումբեր՝ Եուվենթոս, Շախթիոր Տոնեցք եւ Չելսի յամառ պայքար մղեցին: Հոս Շախթիոր աւելի տպաւորեց՝ քան Չելսին ու իր արդիւնքներով հաւասարեցաւ Չելսիի հետ: անոնց միջեւ կատարուած մրցումին կող-էվըրէյճին շնորհիւ ան գրաւեց խմբակին Բ. դիրքը: Եուվենթոս գրաւեց Ա. դիրքը: Դանիոյ Նորթսեալանտը ոչինչ ունէր ընելիք վերոնըշեալ մեծերուն մէջ:

Զ. խմբակին անակնկալը Ֆրանսայի Լիլն էր իր տկար ու ձախող արդիւնքներով: Երկու մեծերը՝ Պայէրն Միլնիխ եւ Վալենսիա առանց դժուարութեան յաջողեցան գրաւել պարագլուխի երկու դիրքերը: Զուրիցերիոյ Պաթէն անյոյս վիճակի մէջ յաջողեցաւ երկու յաղթանակ արձանագրել եւ «Եուրօ Լիկ»ի իր տոմսը ապահովել:

Է. խմբակին մէջ Պարսելոնա ամէնէն ինքնավստահն էր: Հակառակ Սելթիքէն կրած իր



պարտութեան, ան ոչ միայն գրաւեց պարագլուխի դիրքը, այլեւ՝ առանց ղեկարգութեան յաղթանակներ արձանագրեց մրցակից կազմերուն դէմ: Սելթիք եւ Պենֆիլթա մրցեցան երկրորդ դիրքին համար եւ սկովտիացիները աւելի բախտաւոր դուրս եկան: Մոսկուայի Սպարտակը, հակառակ առաջին խաղին իր կրած պարտութեան, տպաւորեց, սակայն յաջորդ մրցումներուն ոչինչ կրցաւ ընել:

Ը. Խմբակի գլխաւոր թեկնածուն՝ Մանչեսթրը Եունայթըտ այնքան ալ դիւրին մրցումներ չունեցաւ: Թուրքիոյ Կալաթասարայը եւ Ռումանիոյ Քլուշը յամառօրէն հետապնդեցին զայն: Մանչեսթրը միայն երկու կէտի տարբերութեամբ գերազանցեց զանոնք: Մինչ թուրքերը գրաւեցին երկրորդ դիրքը՝ շնորհիւ Քլուշի դէմ իրենց արձանագրած դրական արդիւնքին: Խմբակին վերջին դիրքը գրաւող Փորթուգալի Փրական լուսանցքային դեր ունեցաւ Խմբակի մրցումներուն:

Դեկտեմբեր 20-ին կատարուեցաւ Բ. հանգրուանի վիճակաձգութիւնը: Այս հանգրուանի երթի մրցումները տեղի կը կատարուին 12 եւ 13 Փետրուարին, իսկ դարձի մրցումները՝ 19 եւ 20 Փետրուարին: Նշենք, որ այս հանգրուանի մրցումները պիտի կատարուին նաք-աութի դրութեամբ:

Առաջին մրցումը իրարու դէմ պիտի հանէ Կալաթասարայն ու Շալքէն: Բնականաբար, գերմանացիք աւելի մեծ հնարաւորութիւններ ունին Բ. հանգրուան անցնելու:

Սելթիք պիտի մրցի Իտալիոյ հսկաներէն Եուվենթուսի դէմ: Իտալացիք այս տարի բաւական հզօր կազմ ունին եւ շատ հաւանական է որ սկովտիացիներուն առիթ չտան աւելի հեռուները երթալու:

Արսենալ Պայէրն Միլնիթի դէմ մրցելով ականատես պիտի

դառնանք Փուլպոլի դասական մրցակցութեան: Գերմանացիք աւելի լաւ կազմ ունին, իսկ Արսէն Վենկըրի կազմը դժուար գիջող կազմ մըն է:

Գերմանիոյ երրորդ ներկայացուցիչը՝ Տորթմունտ պիտի մրցի մրցաշարքի անակնկալներէն Շախթիորի դէմ: Գերմանացիք պիտի չուզեն զոհ դառնալ տհաճ անակնկալի, իսկ Շախթիոր Համլէթ Միլիթարեանի գլխաւորութեամբ ի վիճակի է պարտութեան մատնելու որեւէ կազմ:

Միլան դարձեալ պիտի մրցի Պարսայի դէմ: Անցեալ տարի ալ այս կազմերը մրցեցան իրարու դէմ եւ Պարսա յաղթական դուրս եկաւ: Այս տարի եւս պատկերը կրնայ կրկնուիլ: Պարսա իր փառքի օրերուն մէջ է, մինչ Միլան ոչինչով կը տպաւորէ:

Վստահաբար, այս հանգրուանի ամէնէն հետաքրքրական մրցումը պիտի ըլլայ Ռէալ Մատրիտ-Մանչեսթրը Եունայթըտ ճակատումը: Մատրիտի կազմը վերջերս հարցերէ կը տառապի, մինչ Եունայթըտ յաղթանակէ յաղթանակ կը սուրայ: Անոնց միջեւ կայանալիք երկու մրցումներն ալ կը թուին ըլլալ տաք եւ կոլառատ:

Սպանիոյ Վալենսիան պիտի մրցի Փարիզ Սէն ժերմէնի դէմ: Այս մրցումը պիտի ըլլայ ակմբային դասական մրցում մը: Ֆրանսացիք ցարդ կը թուին աւելի համոզիչ: Սպանացիք վերջերս կաղացում կ'արձանագրեն եւ կրնան ղեկարգութեան առջեւ գտնուիլ:

Փորթուգալի մեծերէն Փորթոն պիտի մրցի Սպանիոյ այս տարեշրջանի կազմերէն Մալակայի դէմ: Երկու կազմերն ալ հաւասարապէս պատրաստ են լաւ մրցակցութեան եւ արժանի են անցնելու Գ. հանգրուան:



2013-Ը ՆՈՐԱՆՈՐ ՆՈՒԱՃՈՒՄՆԵՐՈՒ ԱԿՆԿԱՎՈՒԹԵԱՄԲ ԴԻՄԱԲՈՐՈՒԵՑՁԱԲ Հ.Մ.Ը.Մ.Ի ԸՆՏԱՆԻՔԻՆ ԿՈՂՄԷ

Մարտ Բելիշեան
ԼՈՍ ԱՆՃԵԼՏՍ

Հինգչաբլի, 3 Յունուար 2013-ի երեկոյեան, Ամանորը մեծ ոգեւորութեամբ եւ նորանոր նրաւումներու ակնկալութեամբ դիմաւորուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու մեծ ընտանիքին կողմէ, իր հարազատ տան մէջ: Նորընտիր Շրջանային Վարչութեան անդամներուն կողմէ ուրախութեամբ հիւրընկալուեցան օրուան հիւրերը: Տոն էին Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Վիգէն Դաւթեանը, ՀՕՄ-ի Շրջանային Վարչութեան ներկայացուցիչներ՝ փոխատենապետուհի Գարմէն Լիպարիտեանն ու Քրիստինա Խանճեանը, Նաւասարդեան 37-րդ մարզախաղերու պատուոյ նախագահ Գագիկ Գէորգեանը, Հ.Մ.Ը.Մ.ի բարերար Ալիս Անտոնեանը, 2012 տարեշրջանի «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական»ը, անցեալի եւ ներկայի Շրջանային Վարչութիւններ անդամներ, մասնաճիւղերու նորընտիր վարչութիւններ եւ այլ հիւրեր: Երեկոն ամբողջական դարձաւ, երբ ներկաներուն միացաւ թեմի Առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոսեան, ընկերակցութեամբ՝ Կոմիտաս Քհնյ. Թորոսեանի:

Ամանորեայ շնորհաւորանքներով եւ բարի գալուստի ջերմ խօսքերով երեկոյին բացումը կատարեց Շրջանային Վարչութեան անդամ եղբ. Արիգ Գէորգեան: Իսկ Շրջանային Վարչութեան բարեմաղթութիւնները փոխանցեց ատենապետ եղբ. Գառնիկ Աբրահամեան:

Եղբ. Աբրահամեան ներկաներուն Նոր Տարին եւ Ս. Ծնունդը շնորհաւորելով մաղթեց, որ 2013-ը նորանոր նուաճումներով հարուստ տարի մը հանդիսանայ: Ապա, ներկայացնելով օրուան պաշտօնական հիւրերը, ան յայտարարեց. «Ուրախութեամբ սկսում ենք Նոր Տարին, որովհետեւ Հ.Մ.Ը.Մ.ի Սան Ծեռնանսօ Հովիտի «Մասիս» մասնաճիւղը սկսում է իր սեփական մարզադաշտը ունենալու գործընթացը, որի համար շնորհաւորում եմ մասնաճիւղը: Ես վստահ եմ, որ այդ մարզադաշտը, ըստ Հ.Մ.Ը.Մ.ի առաքելութեան, պիտի ծառայի շրջանի հայ երիտասարդութեան համախմբման ու դաստիարակութեան»:

Այնուհետեւ իր օրհնութիւնը փոխանցեց Մուշեղ Արք. Մարտիրոսեան, որ օրհնելէ ետք ամանորեայ համադամ ճաշերով լեցուն սեղանները՝ իր ցնծութիւնը յայտնեց ի տես տիպար Հ.Մ.Ը.Մ.ականներուն եւ խրախուսեց զանոնք՝ ըսելով. «Դուք բոլորդ ալ՝ իբրեւ միութեանականներ, տիպար Հ.Մ.Ը.Մ.ականներ էք, որուն պատճառով ալ ամէն տարի դժուար կ'ըլլայ որոշել տիպար Հ.Մ.Ը.Մ.ական այն անձը, որ տիպար ըլլալու բոլոր տուեալները ունի: Մենք հպարտ ենք Հ.Մ.Ը.Մ.ի կազմակերպական կեանքով, կարգապահ ոգիով եւ մասնաւանդ՝ միշտ բարին մօտեցնող տրամադրութեամբ, որովհետեւ երբ մենք մեր նշանաբանին համաձայն՝ «Բարձրացիր-բարձրացուր»ով կ'առաջնորդուինք, կը նշանակէ, որ քրիստոնէական պատուիրաններուն հաւատարիմ կը մնանք»:

Ապա, շնորհաւորելով բոլորին Նոր Տարին եւ Ս. Ծնունդը, Առաջնորդը մաղթեց, որ 2013-ը բարի եւ առողջ տարի մը ըլլայ բոլոր Հ.Մ.Ը.Մ.ականներուն՝ թէ անհատական եւ թէ հաւաքական կեանքի մէջ:

Առաջնորդ հայրը նաեւ վստահեցուց, որ Հ.Մ.Ը.Մ.ի Նաւասարդեան 37-

րդ մարզախաղերու պատուոյ նախագահ Գագիկ Գէորգեանը «միշտ իր սրբտին մօտիկ պիտի պահէ Հ.Մ.Ը.Մ-ը եւ իր բոլոր ծրագիրներուն մէջ անպայման պիտի յիշէ Հ.Մ.Ը.Մ-ը թէ՛ բարոյապէս եւ թէ՛ իր կեանքի արդար վաստակած արդիւնքէն նիւթապէս զօրակցութիւն բերելով անոր»:

Այս առիթով, իր սրտի խօսքը փոխանցեց նաեւ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Վլոգէն Դաւթեան: Ան ուրախութիւնը յայտնեց այն բանին համար, որ Հ.Մ.Ը.Մ-ը իր աշխատանքային նոր տարին կը սկսի մասնաճիւղերուն հետ միասնաբար:

«Իւրաքանչիւր Հ.Մ.Ը.Մ-ական արժեքաւոր է. փոքրիկից, երիտասարդից բռնած մինչեւ տարեց անդամները՝ իրար հետ աշխատեն, իրարից սովորեն եւ քայլ առ քայլ ամէն տարի մեր աշխատանքը մղեն յառաջդիմութեամբ: Ամէն Նոր Տարի, երբ մենք հաւաքուում ենք իրար շուրջ, յիշենք անցնող տարին եւ վստահ լինենք, որ այս տարի աւելի առաջ եւ աւելի մեծ քայլեր ենք վերցնելու», ընդգծեց եղբ. Դաւթեան եւ բոլորին մաղթեց ուրախ ու առողջ տարի մը:



Փոխանցուած այս պատգամներէն ետք, երեկոն շարունակուեցաւ ուրախ մթնոլորտի մէջ: Ներկաները զիրար շնորհաւորեցին եւ բարեմաղթութիւններ փոխանցեցին: Եղբ. Արիգ Գէորգեան եւ յատկապէս Հ.Մ.Ը.Մ-ի Օրէնճ Քառնթիի «Սարդարապատ» մասնաճիւղի անդամներէն եղբ. Ծորճ Պշաճեան, աքորտիոնի ընկերակցութեամբ, Հ.Մ.Ը.Մ-ական, սկաուտական եւ ժողովրդային երգեր նուագելով՝ խանդավառեցին արդէն իսկ ուրախ մթնոլորտը:

Ներկաները ուշ երեկոյեան մեկնեցան տուն, Հ.Մ.Ը.Մ-ի իրենց մասնաճիւղերէն ներս նորանոր նուաճումներ արձանագրելու հաստատակամութեամբ:

with the complements of

Restaurant Al-Mayass



ԱՄԻՍՆԵՐՈՒ ԸՆԴՄԻՉՈՒՄԷ ԵՏՔ՝ ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՎԵՐՍԿՍՄԱՆ ՓՈՐՁ ՀԱԼԷՊԻ ՄԷՉ

Րաֆֆի Սիլահեան Հայկա

Սուրիոյ տազնապալի պայմանները յաղթահարելով, Հ.Մ.-Ը.Մ-ի Հայկալի մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդին նախաձեռնութեամբ, մասնաճիւղի սկաուտական խումբերու քոյրերն ու եղբայրները, ամիսներու բացակայութենէ ետք, անգամ մը եւս թափ տուին իրենց անսակարկ ծառայութեան եւ վերսկսան ըսկաուտական իրենց գործունէութեան:

Սկաուտական տարազը կրող քոյրերուն եւ եղբայրներուն գեղադէմ դէմքերուն վրայ ժպիտը անպակաս էր, թէեւ անոնցմէ իւրաքանչիւրին սրտին մէջ ցաւ ու վիշտ կար, սակայն «Սկաուտը միշտ զուարթ եւ խանդավառ է» դաւանանքը որպէս ուղեգիծ ունենալով՝ անոնք փաստեցին թէ սկաուտը, մանաւանդ մայր գաղութ Հայկալի Հ.Մ.-Ը.Մ-ական սկաուտը միշտ պատրաստ է յաղթահարելու բոլոր դժուարութիւնները:

Այսպէս, Սկաուտական Խորհուրդը եւ մասնաճիւղի խմբապետու-

թիւնը կազմակերպեցին Նոր Տարուան եւ Ս. Ծննդեան տօներուն առիթով հաւաքոյթ մը՝ Սուրբ Աստուածածին եկեղեցւոյ ներքնասրահը: Ներկաներուն միակ փափաքն էր, որ 2013 թուականը Սուրիոյ բերէ խաղաղութիւն եւ ապահովութիւն: Շուրջ երեք ժամ պարելով, երգելով եւ խանդավառ մթնոլորտ ստեղծելով՝ բոլորը իրենց տուները վերադարձան բարձր տրամադրութեամբ:

ԱՍՏԻՃԱՆԱՏՈՒՉՈՒԹԵԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ

Հովանաւորութեամբ Հ.Մ.-Ը.Մ-ի Հայկալի մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդին, Կիրակի, 23 Դեկտեմբեր 2012-ին, Ազգ. Կիւլպէնկեան վարժարանի շրջափակին մէջ տեղի ունեցաւ սկաուտական Վարիչ Առաջնորդի եւ Փոխ Խմբապետի աստիճաններու տուչութեան արարողութիւն: Աստիճան ստացող քոյրերն ու եղբայրները իրենց քննութիւնները նախապէս յաջողութեամբ աւարտած ըլլալով՝ ստացան համապատասխան աստիճաններ:

88-ամեայ Հ.Մ.-Ը.Մ-ի Հայկալի մասնաճիւղը հաւատարիմ իր խոստումին՝ անգամ մը եւս կարողացաւ յաղթահարել իր դէմ ցցուած դժուարութիւններուն եւ պատուաբեր նոր էջ մը արձանագրեց իր ոսկեմատեանին մէջ:





ՅԻՇԱՏԱԿԴ ՄԻՇՏ ՓԱՌԱԲՈՐ ԵՂՔԱՅՐ ՎԱՐԴԱՆ...


Ներոսների համար նախանշուած բարձր պատուանդանին կանգնած է նա Վարդան Բախշեանը, իր հոգսերով ու մտորումներով, գիտնականի իմաստութեամբ եւ քաղաքացու խրոխտ կեցուածքով, բիրեղեայ հոգու մաքրութեամբ, յաղթանակի ու գալիքի հանդէպ ունեցած մեծ հաւատով:

Այդպիսին էր Վարդանը որդին Ազատի, նուիրեալը գաղափարի ու հայրենիքի: Մի մարդ, ով չնայած երիտասարդ տարիքին մտահոգուած էր կրթել սերունդ, որը հայրենիքի համար դժուարին պահերին ասում է «ՆԵՐ-ԿԱՅ»: Այդ նպատակով նա իր գաղափարակից ընկերների հետ հայրենիք վերադարձրեց Հ.Մ.Ը.Մ.ը: Սակայն նրա ազատատենչ հոգին չբաւարարուեց միայն Հայաստանի մանուկների առողջ դաստիարակութեամբ: Չէ՞ որ Արցախում հազարաւոր մանուկներ էին որբանում:

1988-ի առաջին օրերից նա նուիրուեց Արցախեան շարժմանը: Շատերն էին փորձում ետ պահել նրան ճակատ մեկնելուց, քանզի վստահ էին, որ ապագայ փայլուն մտաւորականի կեանքն է վտանգուում: Սակայն բոլոր ջանքերը ապարդիւն էին...

1990-ից Վարդանը ճակատում էր: Մասնակցեց Բեր-

դաձորի հերոսական մարտերին: Սակայն, 1991 թ. Դեկտեմբեր 16-ին, Հասանապատի յաղթական մարտում Վարդանն իր արեամբ շահախեց Արցախի հողը, եւ նրա հոգին միացաւ իր փայփայած հերոսների փաղանգին:



Եռաբլուրում նրա շիրիմը դարձաւ ուխտավայր մտերիմների, ընկերների եւ իր իսկ սաղմնաւորած կազմակերպութեան անդամների սկաուտների համար: Դեկտեմբեր 16-ին նրանք հերթական անգամ մեծաքանակ կազմով այցելեցին Եռաբլուր: Օրը ցուրտ էր, ցուրտ էր ճիշդ այնպէս, ինչպէս 21 տարի առաջ 1991-ին: Ու 1991-ից ի վեր իւրաքանչիւր Դեկտեմբերի 16, ցուրտ է Վարդանին ճանաչող ու չճանաչող, բայց քաջատեղեակ իւրաքանչիւրի հոգում...

Յիշատակդ միշտ փառաւոր եղբայր Վարդան...

«ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ 2012»

Թղթակից ԵՐԵՒԱՆ

Նովտեմբերի 25-29 կանդերչատեկի (Զուլիցերիա) միջազգային ըսկաուտական կենտրոնում անցկացուեց ըսկաուտական ամենամեծ կրթական ծրագրերից մէկը՝ «Սկաուտական Ակադեմիա 2012»ը, որն տարեկան բնոյթ ունի: Այն կազմակերպուած է սկաուտական Եւրոպա տարածաշրջանը՝ «EU Youth in Action Program»ի շրջանակներում:

Այս տարի մասնակցուած էին 40 երկրոր-



րաքանչիւր մասնակից բազմաթիւ թեմաներից հնարաւորութիւն ունէր ընտրելու իրեն աւելի հետաքրքրողը: Եղբ. Նարեկը ներկայ գտնուեց «Երիտասարդների հնարաւորութիւնների մեծացում», «Ի՞նչպէս գաղափարները փոխանցել մի կազմակերպութիւնից մէկ

ներ իրենց 140 մասնակիցներով: Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ը ներկայացնում էր եղբ. Նարեկ Ասատրեանը:

Ակադեմիայի ծրագրի կառուցւածքն այնպիսին էր, որ իւ-

այլ կազմակերպութիւն», «Հաղորդակցութիւն եւ աճ», «Կրթելու նոր եղանակներ», «Երիտասարդների իրաւունքները», «Ռազմավարական ծրագրաւորում եւ աճ», «Ո՞վ ենք մենք-մեր ժամանակների մարտահրաւէրը» թեմաներով քննարկումներին:

Առաւօտեան աշխատանքային նիստերը, գոլիցերիական եւ միջազգային երեկոները, շրջագայութիւններն ու բազմաթիւ վարժութիւնները իւրատեսակ կերպով համեմեցին առանց այդ էլ հետաքրքիր եւ արդիւնաւէտ մտածւած ծրագիրը:

Եղբ. Նարեկը վերադարձաւ նոր հմտութիւններով եւ խորապէս տպաւորուած, ինչը թոյլ է տալիս փաստել, որ ծրագիրը ծառայեց իր նպատակին:



Հ.Յ.Դ. ԳԵՐԱԳՈՅՆ ՄԱՐՄՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ԱՐՄԷՆ ՌՈՒՍՏԱՄԵԱՆԻ ԱՅՑԵԼՈՒԹԻԲՆԸ Հ.Մ.Ը.Մ.Ի ԼՈՆՏՈՆԻ ՄԿԱՌԲՏՆԵՐՈՒՄ

Թղթակից
ԼՈՆՏՈՆ

15 Դեկտեմբեր 2012-ին, Հ.Մ.-Ը.Մ.ի Լոնտոնի մասնաճյուղին հիւրը եղաւ Հ.Յ.Դ. Հայաստանի Գերագոյն Մարմնի ներկայացուցիչ Արմէն Ռուստամեան:

Թէեւ բազմազբաղ իր ժամանակացոյցով, սակայն յարգելի հիւրը առիթը գտաւ այցելելու Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտներուն եւ ներկայ ըլլալու անոնց շաբաթական հանդիպումին:

Ռուստամեան իր սրտի խօսքը փոխանցեց Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտներուն, չընորհաւորեց մասնաճյուղը իր կատարած աշխատանքին համար եւ մաղթեց, որ օր



մը անոնք հնարաւորութիւնը ունենան իրենց հայրենիքը այցելելու:

Սկաուտները հայրենի հիւրին փոխանցեցին յուշանուէր մը:

Հաճելի էր նման օրերու հանդիպում մը ունենալ պատասխանատու անձնաւորութեան մը հետ:

ՔՈՅՐ ՆՈՒԷԼ ՔԵՇԻՇԵԱՆԻ ՓԻՆԿ-ՓՈՆԿԻ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՏԱՐՈՒԱՆ ԱՍՏՂԸ

2 012 տարին յաջողութիւններով լեցուն տարի մը եղաւ Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի մասնաճիւղի փինկ-փոնկի վարպետ քոյր Նոէլ Քէշիշեանի համար, որ առաջին անգամ ըլլալով տիրացաւ Լիբանանի թէ՛ ախոյեանութեան եւ թէ՛ բաժակի տիտղոսներուն:



Քէշիշեան ժամհուրի անդամ Ռիթա Պըսայպէսի հետ տիրացաւ նաեւ Լիբանանի գոյգ աղջկանց առաջնութեան տիտղոսին:

Մետալներու հունձքը այսքանով չաւարտեցաւ: Լիբանանի ախոյեան եւ թիւ 1 դասուած մարզիկ Նոէլ Քէշիշեան Դեկտեմբերին իր մասնակցութիւնը բերաւ

փինկ-փոնկի Կիպրոսի միջազգային մրցաշարքին եւ Ռիթա Պըսայպէսի հետ անգամ մը եւս տիրացաւ գոյգ աղջկանց առաջնութեան բաժակին:

Յայտնենք, որ քոյր Նոէլ Քէշիշեանի խմբակիցները՝ քոյրեր Դուլին Մունջօղլեան եւ Լարա Քէչէպաշեան գրաւեցին Լիբանանի ախոյեանութեան երրորդ դիրքը: Քէչէպաշեան երրորդ դիրքը գրաւեց նաեւ բաժակի մրցումներուն:

Չոյգ աղջկանց մրցումներուն, Լարա-Դուլին գոյգը արժանացաւ երրորդ դիրքին՝ պարտութեան մատնելէ ետք Շապապ Ֆաուարի մրցակից գոյգը:



Հ.Մ.Ը.Մ.Ի ՌԱՈՒՏԱՅԻ ՄԱՄՆԱՃԻԻՂԸ ՆՇԵՑ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ Ա. ՏԱՐԵԴԱՐՁԸ

Թղթակից ՌԱՈՒՏԱ

Հ.Մ.Ը.Մ.Ի Ռաուտայի մասնաճիւղի հիմնադրութեան առաջին տարեդարձին առիթով (25 Նոյեմբեր 2011), մասնաճիւղին նորընտիր վարչութիւնը գաղափարը ունեցաւ տարեդարձը նշել Տըքուէնէի եւ Ռաուտայի Հ.Մ.Ը.Մ.ականներուն եւ հայութեան հետ:

Այս առիթով, Կիրակի, 2 Դեկտեմբեր 2012-ի առաւօտեան, Ռաուտայի ակումբին մէջ տեղի ունեցած ձեռնարկը լաւագոյն արտացոլացումը եղաւ մասնաճիւղին գործունէութեան:

Ձեռնարկին բացման խօսքով հանդէս եկաւ մասնաճիւղի վարչութեան ատենապետ եղբ. Տէնի Տէրվիշեան: Ան ողջունեց ներկաները եւ շնորհակալութիւն յայտնեց, որ ընդառաջեցին վարչութեան հրաւերին:

Եղբ. Տէրվիշեան կարեւորութեամբ նշեց սկաուտական շարժումին անհրաժեշտութիւնը, մանաւանդ՝ Հ.Մ.Ը.Մ.ի շունչին տակ, որպէսզի հայ երիտասարդները հեռու մնան գանազան տեսակի յոռի երեւոյթներէ եւ իրենց

սպառնացող տարբեր վտանգներէ:

Իր խօսքին աւարտին, եղբ. Տերվիշեան շեշտեց, որ Հ.Մ.Ը.Մ.ի նշանաբանը կը պատգամէ այն՝ որ պէտք է միասնաբար բարձրանանք եւ բարձրացնենք:

Այս առիթով խօսք առաւ շրջանի Հ.Յ.Դ. «Շուշի» կոմիտէութեան ներկայացուցիչ Պետիկ Ծառուկեան:

Ծառուկեան ընդգծեց Հ.Մ.Ը.Մ.ի կատարած աշխատանքներուն կարեւորութիւնը, որովհետեւ անոնց շնորհիւ մեր գաւակները հայեցի դաստիարակութիւն կը ստանան, ըսաւ ան:

Եզրափակելով իր խօսքը, Ծառուկեան շրջանի կոմիտէին աջակցութիւնը յայտնեց Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղին բոլոր աշխատանքներուն:

Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան խօսքը արտասանեց ատենապիր եղբ. Հայկ Թապագեան:

Եղբայրը շնորհակալութիւն յայտնեց Հ.Յ.Դ. «Շուշի» կոմիտէութեան՝ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի յաջողութեան իր ունեցած մեծ ներդրումին համար: Ան իր խօսքը եզրափակեց շնորհաւորելով մասնաճիւղին



հիմնադրութեան առաջին տարեդարձը՝ անոր մաղթելով յաջողութիւն եւ յարատեւ վերելք:

Տեղին է նշել, որ ձեռնարկին ամբողջ տեւողութեան հնչեցին Հ.Մ.Ը.Մ.ի երգերը: Միաժամանակ, մեծ պաստառի վրայ ցուցադրուեցան Հ.Մ.Ը.Մ.ի ըսկաուտութիւնը ներկայացնող լուսանկարներ՝ գանազան բանակումներէ, ձեռնարկներէ, սեմինարներէ եւ միութենական աշխատանքներէ:

Խօսքեր կ'արտասանեն Շրջանային Վարչութեան ատենապիր եղբ. Հայկ Թապագեան եւ «Շուշի» կոմիտէութեան ներկայացուցիչ Պետիկ Ծառուկեան:





Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՄՍԵԼՈՅԻ ՄԱՍՆԱԾԻՂԻ ՄԱՐԶԱԿԱՆ ԵՒ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԶՈՐՐՈՐԴ ՄԱՐԶԱՀԱՆԴԵՍԸ

Հ.Մ.Ը.Մ.ի Ալմելոյի մասնաճիւղի վարչութիւն ԱՄՍԵԼՈ

17 Նոյեմբեր 2012-ին, Ալմելոյի (Հոլանտա) «Sports Hall Windmolenbroek» մարզադահլին մէջ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի մարզական եւ սկաուտական չորրորդ մարզահանդէսը, հովանաւորութեամբ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ հովիւ Տէր Մաշտոց Պաղտասարեանի, մասնակցութեամբ Հ.Բ.Ը.Մ.ի «Երեւան» ակումբի, Արնեհեմ, Ալքմաար եւ Նաեմեին շրջաններու վարչականներու, ներկայացուցիչներու, Փոլիպոլի խումբերու, ինչպէս նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի ըս-

կառուցներու եւ մարզիկներու:

Սկաուտական շարքերը մարզական խմբակներով համախմբուած կատարեցին գեղեցիկ տողանցք մը: Քահանայ հօր «Հայր մեր»-ով բացուած յայտարարեցաւ մարզախաղերուն: Տէր հօր օրհնութեան խօսքէն ետք տեղի ունեցաւ դրօշակի արարողութիւն:

Մասնաճիւղի վարչութեան անունով ելոյթ ունեցաւ քոյր Յասմիկ Օհանեան: Ան պատմականը կատարեց ընդհանրապէս Հ.Մ.Ը.Մ.ի եւ մասնաւորապէս Հ.Մ.Ը.Մ.ի Ալմելոյի մասնաճիւղի եւ փոխանցեց միասնականութեան ոգի ներշնչող խօսքեր:

Այնուհետեւ տեղի ունեցաւ սկաուտական աստիճաններու եւ պաշտօններու տուելութիւն: Քոյր Նանէ Սեփոյեան

եւ եղբ. Մասիս Վահանեան ստացան Վարիչ Առաջնորդի աստիճան, քոյր Նալիի Ասլանեան փոխ վոնմակապետի պաշտօն, իսկ քոյրեր Դալար Տէր Ղազարեան եւ Լուսին Աւաննիսեան փոխ երամապետուհիներու պաշտօններ:

Պաշտօնական բաժինէն ետք սկսան մարզական մրցումները՝ սրահի Փոլիպոլի (փոքրերու եւ երիտասարդներու), ինչպէս նաեւ աղջիկներու վոլիպոլ:

Խաղերու աւարտին տեղի ունեցաւ բաժակներու եւ մետալներու բաշխում: Հ.Բ.Ը.Մ.ի նախագահ Յարութիւն Տէր Մովսէսեան պարգևատրեց Առաջին հանդիսացող աղջկանց վոլիպոլի խումբը (Հ.Մ.Ը.Մ.), եղբ. Սեւան Իշխանեան մետալներ բաժնեց յաղթանակի արժանացած կրտսեր մարզիկներուն, իսկ

երիտասարդներու յաղթանակի բաժակն ու մետալները բաժնեց Հ.Մ.Ը.Մ.ի Ալմելոյի վարչութեան ատենապետ եղբ. Սարգիս Տէր Ղազարեան («Երեւան» ակումբի մարզիկներուն):

Մարզահանդէսի աւարտին յստակ էր, թէ միակ յաղթականը բաժակներու եւ մետալներու արժանացածը, հոլանտահայ գաղութին էր: Անոնք գեղեցիկ

յիշատակներով ու տպաւորութեամբ, յառաջիկայ տարի կրկին հանդիպելու յոյսով բաժնուեցան իրարմէ:

Մարզահանդէսին թուային պատկերը ներկայացնելու համար կ'արձանագրենք մասնակիցները իրենց բաժանումներով:

20 գալլիկ-արծուիկ, 40 արի-արեւոյշ, 3 խմբապետ եւ 7 աստիճանաւոր-

ներ, Հ.Բ.Ը.Մ.ի 8 մարզիկ, «Երեւան» ակումբի 8 մարզիկ, տիկնանց յանձնախումբի 5 անդամ, Ալքմաար, Նաեմեին եւ Արնեհեմ շրջաններէն 8-ական մարզիկ եւ 200 հոգի, հոլանտահայ գաղութի անդամներ:

Նախապատրաստական աշխատանքներու կազմակերպիչ յանձնախումբին, բացի մասնաճիւղի վարչութիւնէն, իրենց մասնակցութիւնը բերին ընդհանուր խմբապետ եղբ. Սեւան Կորկիսեան, Միաւորի խմբապետ եղբ. Ժազ Մատաղուտողեան, Աքելլա քոյր Անիթա Կիրակոսեան-Կորկիսեան եւ օժանդակ մարմինը:

Աշխատանքի նկատմամբ անոնց հաւատքի ոգին ներկայ էր 2-3 ամիս առաջ մարզադաշտերուն վրայ, ուր բոլորն ալ խանդավառութեամբ լծուած էին աշխատանքի ժողովներով, ծրագիրներու իրականացմամբ ու կազմակերպելով: մինչ այս ձեռնարկի յաջողութեան մէջ իր կարեւոր դերակատարութիւնը ունէր նաեւ ընտանեկան օժանդակութիւնը:





Հ.Մ.Ը.Մ. ԱԿԱՆ «ՃՐԱԳ» Ը

ԱԼՄԵԼՈՅԻ ՄԵԿՈՒՍԻ ՄԱՄՆԱՃԻՒՂԻ ՄԿԱՈՒՏՈՒԹԵԱՆ ԳՐԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Համացանցային շրջանառութեան մէջ է «Ճրագ» սկաուտական թերթիկը, իբրեւ Հ.Մ.Ը.Մ-ի Ալմելոյի (Հոլանտա) մեկուսի մասնաճիւղի սկաուտութեան գրական յանձնախումբի թերթիկ:

«Ճրագ»-ի առաջին թիւը (Ա. տարի, թիւ 1) կը կրէ Յունուար 6, 2013 թուականը: Թերթիկը կը բաղկանայ 6 էջէ եւ կը սկսի «Մեր խօսքը» առաջնորդող գրութեամբ:

«Մեր խօսքը» թերթիկին հրատարակութեան տունն տուող պատճառները կը ներկայացնէ այսպէս. «1 Դեկտեմբեր 2012-ին, Հ.Մ.Ը.Մ-ի Ալմելոյի մեկուսի մասնաճիւղի վարչութեան գումարած ժողովին որոշումով, միութեան հովանաւորութիւնը ստացւեցաւ հրատարակելու «Ճրագ» թերթիկը, միութեանս սկաուտական գրական յանձնախումբին ջանքերով, ի նպատակ ունենալով ծանօթացնել Հ.Մ.Ը.Մ-ի եւ միութեանս աշխատանքները հոլանտահայ համայնքին եւ բոլոր հետաքրքրուողներուն»:

Քիչ անդին, թերթիկի աշխատակազմին անդրադառնալով՝ «Մեր խօսքը» կը հաստատէ. «Մեր յանձնախումբի անդամները ոչ թղթակիցներ են, ոչ ալ հայ գրականութեան գրագէտներ, բայց հնարաւոր ճիգեր եւ կարողութիւններ պիտի տրամադրեն Հ.Մ.Ը.Մ-ը ծանօթացնելու մեր ընթերցողներուն»:

«Ճրագ» կը պատրաստուի երկլեզու ձեւով՝ հայերէն եւ հոլանտերէն: Առաջին թիւին մէջ ներկայացուած են «Տէրունական աղօթք», Հ.Մ.Ը.Մ-ի ծրագիր-կանոնագրի մուտքի բաժինը (Հ.Մ.Ը.Մ-ի անուն եւ նպատակ), «Ի՞նչ է ռազմավարական ծրագիրը», «Ո՞վ է գայլիկը», «Ինչո՞ւ եղբայր կամ քոյր»,



մասնաճիւղին 2012 տարուան գործունէութիւնը, այլազան լուրեր եւ կարճ հատուածներ Հ.Մ.Ը.Մ-ի ռազմավարական ծրագիրին մասին տղթ. Շահէ Ենիգոմչեանի յօդուածէն:

Մասնաճիւղին 2012 տարուան գործունէութեան ներկայացումը կը կատարուի ժամանակագրական հետեւեալ ակնարկով.-

6 Յունուար.- Մ. Ծնունդի պարահանդէս:
16 Փետրուար.- Վարդանանցի տօնին առիթով թէյյասեղան Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ սրահին մէջ:

3-4 Մարտ.- Սկաուտական բանակում Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ սրահին մէջ:

11 Մարտ.- Տարեկան ընդհ. ժողով:

8 Ապրիլ.- Ս. Զատիկուան պարահանդէս:

30 Ապրիլ-4 Մայիս.- Սկաուտական ընդհանուր բանակում:

26 Մայիս.- Սկաուտներու մասնակցութիւն «Հայ Տուն»-ի կողմէ կազմակերպուած Գառնիկ Մարգիսեանի համերգին

9 Սեպտեմբեր.- Ընդհանուր ժողով:

16 Սեպտեմբեր.- Ս. Խաչի տօնին առիթով թէյյասեղան:

3 Նոյեմբեր.- Սկաուտական խմբապետական բանակում:

17 Նոյեմբեր.- Մարզական եւ սկաուտական տարեկան մարզահանդէս:

31 Դեկտեմբեր.- «Հայ Տուն»-ի հետ գործակցաբար՝ Նոր Տարուան պարահանդէս:

«Ճրագ»-էն օրինակներ ունենալու համար մասնաճիւղի վարչութեան հետ կարելի է կապուիլ հետեւեալ հասցէներով.- info@homenetmenholland.nl, Facebook/Homenetmen Almelo.



Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՒՍՏՐԱԼԻՈՅ ՄԻՋ-ՄԱՍՆԱՃԻՒՂԱՅԻՆ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ 44-ՐԴ ՄԱՐԶԱՆԱՂԵՐԸ

ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՍՔԱՆՉԵԼԻ ՀԱՄԱԽՄԲՈՒՄ

Յովհաննես Սարտոյեան ՍԻՏՆԻ

Հ.Մ.Ը.Մ.Ի ԱԼՍՏՐԱԼԻՈՅ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՅՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՃԵՈՆՈՒԹԵԱՄԲ, ՇՐՋԱՆԱՅԻՆ մարզական յանձնախումբի կազմակերպութեամբ եւ «Անդրանիկ», «Արաքս», «Արարատ», «Նաւասարդ» ու «Կամբ» մասնաճիւղերու մարզական խումբերուն մասնակցութեամբ, Հ.Մ.Ը.Մ.Ի ԱԼՐԱՏՐԱԼԻՈՅ միջ-մասնաճիւղային Նաւասարդեան 44-րդ մարզախաղերը մեծ յաջողութեամբ իրագործուեցան հայաշունչ միջնորդութի մէջ:

23-26 Դեկտեմբեր 2012-ին, երեք օրերու վրայ երկարող մրցաշարքերը ընդգրկեցին երկսեռ պասթեթպոլի, փինկ-փոնկի,

հէնտպոլի, մինիպոլի, սրահի ֆուլթպոլի եւ ֆուլթպոլի մրցումներ, երիտասարդական ուրախ երեկոներ, ընտանեկան հաւաքոյթ-ճաշկերոյթ եւ բազմամարդ յաղթանակի պարահանդէս, որ համախմբեց ամէն տարիքի հարիւրաւոր մարզիկներ եւ մարզասէր խումբերամ հասարակութիւն մը:

Նաւասարդեան խաղերը սկսան Կիրակի, 23 Դեկտեմբերի առաւօտեան ժամը 9.00-ին, «Ryde Community Sports

Centre»-ի նորակառոյց շքեղ մարզահամալիրին մէջ:

ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ ԲԱՑՄԱՆ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԸ

Նոյն օրը, յետմիջօրէի ժամը 4.00-ին տեղի ունեցաւ Նաւասարդեանի բացման պաշտօնական հանդիսութիւնը: Բազմահազար ներկաներու շարքին էին հրաւիրեալներ Աւետիս Քհնյ. Համբարձումեան՝ ընկերակցութեամբ Վարուժան Պօղոսեանի, Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Վիգէն Քորթեան, Հ.Յ.Դ. «Դրօ» Առանձնակի Կոմիտէի անդամներ Հայկ Գալսերեան եւ Արա Պոյաճեան, ի պաշտօնէ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Տիրան Վահրատեան, Համազգայինի Շրջանային Վարչութեան անդամ Սիլվա Նազարեան, ՀՕՄ-ի Շրջանային Վարչութեան ատենապետուհի Սիլվա Թիւֆէնքճեան, Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրո-



«Արարատ»-ի յաղթական մարզիկներ:



«Նաւասարդ»ի յաղթական մարզիկներ:

նական Վարչութեան նախկին անդամ եղբ. Սարգիս Տէր Պետրոսեան, մասնաճիւղերու վարչական անդամներ, Հ.Մ.Ը.Մ-ի «Մարզիկ» պաշտօնաթերթի ներկայացուցիչ եղբ. Յովհաննէս Մարտոյեան եւ մարզախաղերու մարզիկներու երդման կնքահայր եղբ. Սահակ Եղոյեան:

Ազգային ոգեւորիչ միջնորդութի մէջ, մարզահամալիր մուտք գործեցին դրօշակակիրները՝ բարձր բռնած Աւստրալիոյ, Հայաստանի, Հ.Մ.Ը.Մ-ի եւ մասնաճիւղերու յատուկ դրօշակները: Թրմբկահարները իրենց կշռութաւոր նուագով առաջնորդեցին սկաուտական խմբապետական կազմերը, մարզախաղերուն մասնակցող հարիւրաւոր մարզիկները, մարզիչները, մարզական յանձնախումբի անդամները, պատասխանատու քոյրերն ու եղբայրները: Ծուտով հսկայ համալիրը շնչաւորուեցաւ Հ.Մ.Ը.Մ-ական բոյրով. պահը խորիմաստ էր, տեսարանը՝ գօտեպնդիչ: Յուզիչ էր տեսնել Հ.Մ.Ը.Մ-ական նորահաս սերունդը՝ գրաւականը հայ ժողովուրդի գոյատեւման, պայծառ յոյսը Հայաստանին:

Հնչեցին Աւստրալիոյ, Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ-ի քայլերգները: Օրուան հանդիսավար՝ Շրջանային Վարչութեան անդամ եղբ. Րաֆֆի Պոչնաքեան բարի գալուստի ջերմագին խօսքերով ողջունեց ներկաները, ներկայացուց օրուան յայտագիրը, ապա հրաւիրեց վաստակաշատ Հ.Մ.Ը.Մ-ական եղբ. Սահակ

Եղոյեանը, որպէսզի վկան ըլլայ իւրաքանչիւր մասնաճիւղէ մէկ մարզիկի մասնակցութեամբ կատարուելիք մարզիկներու հաւաքական երդման արարողութեան:

Հ.Մ.Ը.Մ-ի Աւստրալիոյ Շրջանային Վարչութեան խօսքը փոխանցեց ատենապետ եղբ. Տիրան Վահրատեան: Ան ըսաւ, որ Նաւասարդեան մարզախաղերը շարունակուելիքն են կազմեն Սուրիոյ Հայէպ քաղաքին մէջ ծնունդ առած խաղերուն, որոնք սովորաբար տեղի կ'ունենային Զատիուան օրերուն, իրենց շուրջ համախմբելով բազմահազար երկսեռ մարզիկներ, ծովածաւալ մարզասէր հայ թէ՛ օտար հասարակութիւն: Այսօր տազնապալի օրեր կը դի-

մագրաւեն սիրելի Հայէպը եւ Սուրիոյ հայաշատ այլ շրջանները: Վտանգուած են տեղւոյն ազգային մեր կառույցները: Դադրած է Հ.Մ.Ը.Մ-ական գործունէութիւնը: Աւստրալիոյ մէջ, ազգովին խոր մտահոգութիւն կ'ապրինք եւ բաժնեկից կը դառնանք սուրիահայ մեր ժողովուրդի տազնապներուն ու ցաւերուն, անոնց անմիջական կարիքներուն օգտակար դառնալու պատրաստակամութեամբ: Տօնական օրերուն մեր մաղթանքն է, որ շրջանին մէջ տիրէ հանդարտութիւն ու խաղաղութիւն, իսկ սուրիահայ մեր սիրելի համայնքը ապրի անվտանգ ու ապահով կեանք:

Այս առիթով, եղբ. Վահրատեան ներկաներէն խնդրեց մէկ վայրկեան յոտնկայս լուծեամբ յարգել յիշատակը Սուրիոյ դէպքերուն զոհ դացած բոլոր հայորդիներուն:

Ապա, իր խօսքը շարունակելով, ան յայտնեց, թէ անցնող 44 տարիներուն, կանոնաւոր յաջորդականութեամբ, իրերայաջորդ Շրջանային Վարչութիւններ կազմակերպած են Նաւասարդեան մարզախաղեր, քանի մը օրերու այդ ժամանակամիջոցը վերածելով հայկական բոյր, ոգի ու շունչ ստեղծող երիտասարդական միջնորդութի, որուն հիմնական նպատակը եղած է ու կը շարունակէ մնալ հայապահպանում, մրցակցութեան ազնիւ ոգիով համագործակցութիւն:

Այսօր կը սկսին մարզախաղերը, շարունակեց ան, - բոլորս նախանձախնդիր ենք անոր ամբողջական յաջողութեան:



«Անդրանիկ»ի կրտսեր աղջիկներ:

Մրցումներու ընթացքին պիտի ըլլան յաղթական խումբեր, անոնց կողքին՝ պարտուողներ, սակայն Հ.Մ.Ը.Մ.ակա- նի ոգին պէտք է ըլլայ տիրապետողը: Բոլորս պարտաւոր ենք մեր կեցուածքով արժեւորել եղբայրական այդ ոգին, իրարու ձեռք սեղմելով, գիրար շնորհաւորելով:

Խօսքին աւարտին, եղբ. Վահրատեան բացուած յայտարարեց միջ-մասնաճիւղային Նաւասարդեան 44-րդ մարզախաղերը:

Յաջորդ խօսքը արտասանեց Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Վիգէն Քորթեան: Ան հանգամանօրէն ողջունեց Նաւասարդեան մարզախաղերուն գովելի մակարդակով կազմակերպումը, շնորհաւորեց Շրջանային Վարչութիւնը, մարզական յանձնախումբը, մասնակից մասնաճիւղերը եւ հեղասահ ու յաջող մրցակցութիւն մաղթեց բոլորին:

Հ.Յ.Դ. «Դրօ» Առանձնակի Կոմիտէին անունով ելոյթ ունեցաւ Արա Պոյաճեան: Ան բարձր գնահատեց երիտասարդ տարրերով ու հայաշունչ պայծառ տեսլականով Նաւասարդեան մարզախաղերուն մասնակցող նորահաս մատղաշ սերունդի տիրական ներկայութիւնը: Ան ըսաւ, որ Հ.Յ.Դ. «Դրօ» Առանձնակի Կոմիտէն հնարաւոր բոլոր միջոցներով կը շարունակէ իր քաջախիտները եւ գորակցութիւնը Հ.Մ.Ը.Մ.ի հայանպաստ, ի մասնաւորի՝ սերնդապահ առաքելութեան յաջողութեան ի խնդիր:



«Նաւասարդ»ի աղջիկներ:

Հուսկ, հրաւիրուեցաւ Աւետիս Քհնյ- Համբարձումեան իր սրտի խօսքը արտասանելու եւ «Պահպանիչ»ով մարզիկներն ու ներկայ հասարակութիւնը օրհնելու համար: Երիտասարդ հոգեւորականը գգալի ոգեւորութեամբ իր խորագրաց գնահատանքը յայտնեց Շրջանային Վարչութեան եւ «Անդրանիկ», «Արաքս», «Արարատ», «Նաւասարդ» եւ «Կամք» մասնաճիւղերու վարչութիւններուն ու մարզական շարքերուն, հայանուէր եւ ազգաշահ այս ձեռնարկին համար: Ան մաղթեց նորանոր յաջողութիւններ եւ հոգեպարար «Պահպանիչ»ով ու «Տէրունական Աղօթք»ով հայրական իր օրհնութիւնը բաշխեց բոլորին:

ՄՐՑՈՒՄՆԵՐԸ

Բացման տպաւորիչ հանդիսութեան յաջորդեց Փութպոլի երէց տղոց մրցումը «Արարատ» եւ «Անդրանիկ» մասնաճիւղերուն միջեւ: Չափազանց հետաքրքրական, «տաք» ու բարձր մակարդակի մրցումը վերջ գտաւ «Արարատ»ի յաղթանակով՝ 2-1 արդիւնքով: «Արարատ» տիրացաւ «Թորոս Գարամանեան» շրջուն բաժակին:

Երկուշաբթի, 24 Դեկտեմբերի կէսօրէ առաջ ժամը 9.00-էն սկսեալ, «Rooftop Basketball Stadium»ի դաշտերուն վրայ տեղի ունեցան ամէն տարիքի ու դասակարգի երկսեռ, երէց ու կրտսեր պասքեթպոլի եւ սրահի Փութպոլի գտումները եւ կարգ մը աւարտականները: Նոյն օրը, երեկոյեան, տեղի ունեցաւ երիտասարդական ուրախ երեկոյ: Միաժամանակ, Հայ Մշակութային Կեդրոնի սրահին մէջ կազմակերպուած էր ընտանեկան երեկոյթ: Երկու ձեռնարկները բազմամարդ ներկայութեամբ եւ ուրախ մթնոլորտով պսակուեցան յաջողութեամբ:

Չորեքշաբթի, 26 Դեկտեմբեր 2012-ին, «Rooftop Basketball Stadium»ի բոլոր դաշտերը ապրեցան խանդավառ եռուգեռ: Ամէնուրեք խուռներամ բազմութիւն էր. երիտասարդութիւն, նորահաս սերունդ, մարզասէր հայ հասարակութիւն, մեր անցեալի Նաւասարդեան տօնակատարութիւնները յուշող ազգային խանդավառութիւն, ու այս բոլորին ընդմէջէն միջ-մասնաճիւղային Նաւա-



«Արարատ»ի աղջիկներ:



«Արաքս»ի եւ «Արարատ»ի տղոց խումբեր:



«Անդրանիկ»ի եւ «Նաւասարդ»ի աղջկանց խումբեր:

սարդեան 44-րդ մարզախաղերու եզրափակիչ մրցումներ, կիսաւարտականներ, աւարտականներ, մետալներու եւ բաժակներու տուչութիւն, մեծով ու պզտիկով խումբերու քաջալերանքներ: Անմոռանալի պահեր, յաղթականը՝ ուրախ ժպտերես, պարտուողը՝ յուսախաբ: Տիրապետողը, սակայն, Հ.Մ.Ը.Մ.-ական եղբայրական ոգին էր: Ահա գաղտնիքը Հ.Մ.Ը.Մ.-ին: Կը դիտես՝ սիրտդ կը խայտայ: Բոլորը նոյնացած սրբազան ոգիով գիրար կը բարեւեն, իրարու ձեռք կը սեղմեն, գիրար կը շնորհաւորեն: Այս է հոգին, հայր՝ ոգին:

Նաւասարդեան մարզախաղերու եզրափակիչը անհամբեր սպասուած երէց տղոց պասքէթպոլի մրցումն է, որ այս

տարի իրարու դէմ հանեց Սիտնիի «Արարատ»ը եւ Մելպուռնի «Արաքս»ը: Հետաքրքրական, արագ, բարձրորակ փոխանցումներով մրցումը վերջ գտաւ նոյն թափով ու ոգիով՝ «Արարատ»ի յաղթանակով:

ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ ՅԱՂԹԱՆԱԿԻ ԾԱՇԿԵՐՈՅԹ-ՊԱՐԱՀԱՆԴԵՍԸ

Նոյն օրը, երեկոյեան ժամը 8.00-ին, «Waterview»ի շքեղ պարասրահին մէջ տեղի ունեցաւ Նաւասարդեան յաղթանակի ճաշկերոյթ-պարահանդէսը: Ծուրջ 700 Հ.Մ.Ը.Մ.-ականներ, համակիրներ, կազմակերպիչ յանձնախումբին կողմէ դասաւորուած ճոխ սեղաններուն շուրջ վայելեցին Հ.Մ.Ը.Մ.-ավա-

յել հայաշունչ պահեր: Յաղթանակի պարահանդէսները միջոց են, որպէսզի խումբ թէ անհատ մարզիկ, իրենց շահած մրցանակներուն արժէքը վերածեն մէկ ու հաւաքական յաղթանակի, Հ.Մ.Ը.Մ.-ի մեծ ընտանիքի յաղթանակին:

Օրուան հանդիսավար քոյր Վիվիան Տէր Թադէոսեան կազմակերպիչ յանձնախումբին անունով ողջունեց ներկաները, ներկայացուց երեկոյին ընթացքին գործադրուելիք յայտագիրը եւ իր խօսքը շարունակեց. «Սիրելիներ, երեք օրուան վրայ երկարող մրցումներէ ետք, այս գիշեր լաւագոյն առիթն է, որ ուրախ մթնոլորտի մէջ գիրար շնորհաւորենք, միաժամանակ Նաւասարդեան մարզախաղերուն հեզասահ ու յաջող ընթացքը արժեւորելով, պանծացնենք Աւստրալիոյ շրջանի Հ.Մ.Ը.Մ.-ի 47 տարիներու անսպառ ծառայութեան ոգին»:

Հ.Մ.Ը.Մ.-ի Աւստրալիոյ Շրջանային Վարչութեան անունով ելոյթ ունեցաւ քոյր Անի Բանոյեան: Ան ողջունեց մեծաթիւ Հ.Մ.Ը.Մ.-ականներու եւ համակիրներու ներկայութիւնը եւ մեծապէս գնահատեց պարահանդէսի յանձնախումբին բժախնդիր աշխատանքը՝ երեկոյին յաջողութեան ի գործ դրած իր ճիգերուն համար: Քոյրը գնահատեց մարզական յանձնա-



խումբին աշխատանքները, որոնց շնորհիվ բոլոր մարզախաղերը ընթացան հեզասահ ու կանոնաւոր ճշդապահութեամբ: Ապա, ան գովելի գտաւ մասնաճիւղերու վարչութիւններուն դրական մօտեցումը կազմակերպչական ընդհանուր հարցերու նկատմամբ: Ան դրուատեց նաեւ մասնաճիւղերու ընկերային յանձնախումբերը, որոնք ժրջան կերպով խաղերու ընթացքին սպասարկեցին ուտելիք, գովացուցիչ եւ ախորժաբեր այլ պատուներ: «Այս պահուս հաւաքուած ենք իբրեւ մէկ ընտանիքի անդամներ, կը տօնակատարենք քանի մը օրուան մեր յիշատակներուն արդիւնքը, մեր բոլորին յաղթանակը: Յաղթանակի այս պարահանդէսը Նաւասարդեան հանդիպումներուն վերջին բաժինը ըլլալով հանդերձ, նաեւ նախապատրաստութեան խոստում է յաջորդին՝ 45-րդ մարզախաղերուն: 47 տարի այս հասկացողութեամբ, Հ.Մ.Ը.Մ. ականի ազգային բարձր գիտակցութեամբ առաջնորդուեցանք, նորահաս մատղաշ սերունդներ ներշնչուեցան Նաւասարդեան

հանդիպումներու հարուստ եւ ազգային ոգիով: Շրջանային վարչութիւնը հաստատակամ է, ձեր գործակցութեամբ, նոյն թափով իրագործելու Նաւասարդեան միջ-մասնաճիւղային յաջորդ խաղերը: Կրկին շնորհակալութիւն բոլորիդ: Քաջառողջութիւն եւ յաջողութիւն ձեր անհատական ու հաւաքական ծրագիրներուն», եզրափակեց քոյր Անին:

Խրախճանք-պարահանդէսը թափ ստացաւ, երբ մթնոլորտը խանդավառեց «Pomegranates» նուագախումբը, մասնակցութեամբ երկու երգիչներու՝ Նիկոլ Պոյմուշագեանի եւ Բաֆֆի Ատուրեանի: Այնուհետեւ ելոյթ ունեցաւ Միացեալ Նահանգներէն նոր ժամանած Գագիկ Պատալեան՝ իր նուագախումբով: Այսպէս, երկու նուագա-



Երբ. Սահակ Եղոյեան կ'ընդունի խաղերու մարզիկ-մարզիկուհիներուն երդումը:


խումբերը ամբողջ գիշեր, փոխն ի փոխելոյթներով, խանդավառ երգերու շարաններով թնդացուցին սրահը: Շուրջպարերը մինչեւ առաւօտեան կանուխ ժամեր ստեղծեցին սքանչելի խանդավառութիւն: Բոլորը տուն մեկնեցան ուրախ տրամադրութեամբ՝ յաջորդին վերամիանալու խոստումով:

PINK
Kimberley
AUSTRALIA

PinkKimberley.com.au

Diamonds beyond rare

Pink Kimberley is an exquisite blend of natural Australian pink diamonds from the Argyle mine and white diamonds surrounded by 18ct gold. The jewellery designs are unique and distinctive. Australian Argyle pink diamonds are the rarest & most precious diamonds in the world.



ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԵՐ

Պատրաստեց՝ Շաղիկ Գեորգեան ՊԷՅՐՈՒԹ

ԱՐԱՐԱՏ

Արարատը հայկական լեռնաշխարհի բարձրագույն լեռն է (5156 մ.)։ Ան առանձին լեռնազանգուած մըն է։ Կազմուած է կոնաձեւ երկու մասէ՝ Մասիս (5156 մ.) եւ Սիս (3925 մ.)։

Մասիսը ունի դէպի հիւսիս թեքուած գառիթափ ու ժայռոտ գագաթ։ Լանջերը կտրտուած են ճառագայթաձեւ ձորակներով ու հեղեղատներով։

Սիսը կանոնաւոր կոնաձեւ լեռ է։ Գագաթի մասը ալիքաւոր հարթավայր է՝ ծածկուած ժայռերով ու քարակոյտերով։

Արարատը Աստուածաշնչական այն լեռն է, որուն վրայ իջեւանած է Նոյեան տապանը՝ ջրհեղեղի ժամանակ։ Իր գեղեցկութեամբ ու վեհութեամբ ան խորհրդաւոր ազդեցութիւն ձգած է հայ ժողովուրդին վրայ։ Արժանացած է պաշտամունքի եւ առասպելաբանութեան։ Հայոց հին հաւատքին մէջ Մասիսը քաջացողներու դիցարանն էր։

Առաջին անգամ Մասիսի գագաթը բարձրանալու փորձ կատարած է Յակոբ Մծբնեցի ճգնաւորը՝ Նոյեան տապանը գտնելու եւ մասունք բերելու նպատակով։ Սակայն, ճանապարհին ան յոգնած եւ վախճանած է։

1829 թուականին Դորպատի համալսարանի փրոֆեսէօր Ֆրետրիխ Փարոտի հետ Մասիսի գագաթը


բարձրացած է հայ մեծ գրող Խաչատուր Աբովեան։

ԱՐԱԳԱԾ

Արագածը Հայաստանի Հանրապետութեան բարձրագույն լեռն է։ Ան ունի չորս գագաթ։ Ամէնէն բարձրը հիւսիսայինն է՝ 4090 մ., յետոյ կու գան հիւսիս-արեւմտեանը՝ 4080 մ., արեւելեանը՝ 3916 մ. եւ հարաւայինը՝ 3879 մ.։

Արագածէն կը բխին բազմաթիւ սառնորակ աղբիւրներ։

Լեռնազանգուածը հարուստ է խոտածածկ հարթավայրերով եւ ալպեան փարթամ արօտավայրերով։ Մարգագետինները հարուստ են անուշահոտ ծաղիկներով՝ մանուշակ, վայրի շուշան, կակաչ, գանգալածաղիկ եւ այլն։





Արագածի կենդանական աշխարհի ներկայացուցիչներն են ճագարամուկը, նապաստակը, աղուէսը, գայլը, մողեսները, մասամբ կրիաներն ու օձերը, շատ են թռչունները:

ԱՐԱ ԼԵՌ

Արա կամ Արայի լեռը կը գտնուի Հրազդան եւ Քասախ գետերու միջև: Բարձրութիւնը 2577 մ. է: Կլիման ցամաքային է, անձրեւային տեղումները՝ 300-400 մմ.:

Տարուան տաք եղանակներուն ամբողջ լեռը կը պատուի գոյնզգոյն փարթամ ծաղիկներով: Ունի բազմաթիւ կենդանիներ: Գազաթի քարքարոտ մասերուն մէջ շատ են թռչունաւոր օձերը:

Ըստ աւանդութեան, լեռը կոչուած է Արա գեղեցիկ արքային անու-



նով: Ասորեստանի թագուհի՝ Շամիրամի դէմ ճակատամարտի ժամանակ, Արան իր զօրքը դասաւորած է Արա լեռան ստորոտին: Իսկ թագուհին դիրքաւորուած է Հատիսի լանջին:

Ըստ առասպելին, Արա լեռը մար-

մինն է Արա գեղեցիկին, որ զոհուած է ճակատամարտին ժամանակ: Հեռէն այն իսկապէս կը նմանի ձեռքերը կուրծքին դրած, պառկած մարդու:

(Լուսանկարները՝ Զօրիկ Գալստեանի)


ՓՈՔՐՈՒԿ ԼԵՌՆԱԳՆԱՅԸ

2001 թուականին վեց տարեկան Ամատունի Գայֆաճեանը իր հօր՝ Սերգէյ Գայֆաճեանի հետ բարձրացաւ Արարատի գագաթը: «Անունս Ամատունի է, կ'ապրիմ Ռուսիոյ Տոնեցք քաղաքը, բայց ես ինծի հայ կը նկատեմ: Արարատ լեռան մասին հայրս պատմած է. հոն իջեւանած է Նոյեան տապանը, ասոր մասին Փիլմ ալ դիտած եմ», - կ'ըսէ փոքրիկ լեռնագնացը:

Հայր եւ որդի Գայֆաճեանները ճամբայ ինկան իրենց պապերու երկիրը եւ 13-14 Օգոստոս 2001-ին բարձրացան Սրբազան լեռը՝ Արարատը, իսկ շաբաթ մը ետք՝ 20 Օգոստոսին անոնք նուաճեցին փոքր Մասիսի գագաթը:



Տարբեր Հայեացքով



Էլի Հուլիշեան

ՍՈՒՏՈՔՈՒ

		7		6		2		
	1			7			9	
4			8		1			6
		3	2		6	4		
6	2						3	7
		1	7		8	5		
1			5		7			3
	7			8			4	
		2		4		6		

Հորիզոնական եւ ուղղահայեաց 9 շարքերով եւ սիւնակներով (9x9) կազմուած գծացանցը բաղկացած է իւրաքանչիւրը 9 քառակուսի հաշուող 9 բաժիններէ (3x3): Բացառումի սկզբունքին կիրարկուծով իւրաքանչիւր քառակուսիի մէջ թուանշան մը զետեղել՝ այնպէս մը, որ հորիզոնական իւրաքանչիւր շարք, ուղղահայեաց իւրաքանչիւր սիւնակ եւ 9 քառակուսիից իւրաքանչիւր բաժին ունենայ 1-9 թուանշանները՝ իւրաքանչիւր թուանշան միայն մէկ անգամ գործածուելու պայմանով: Այլ խօսքով, ոչ մէկ պարագայի արտօնուած է թուանշան մը կրկնել միեւնոյն շարքին, սիւնակին եւ բաժինին մէջ: Սկսելու համար, կարգ մը թուանշաններ իրենց ճշգրիտ քառակուսիներուն մէջ զետեղուած են:

Նախորդին լուծումը

8	3	6	5	4	1	7	9	2
1	2	9	6	8	7	4	5	3
5	4	7	2	3	9	1	8	6
9	1	4	3	2	8	6	7	5
2	7	5	4	9	6	8	3	1
6	8	3	1	7	5	2	4	9
7	5	2	9	1	4	3	6	8
4	6	1	8	5	3	9	2	7
3	9	8	7	6	2	5	1	4

Պատասխանը՝ յաջորդիւ


ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ

1. Իտալիոյ ֆուտբոլի կազմերէն:
2. Գործ, վարմունք - Գուր:
3. Յանդիմանութիւն - Փոքրացնող մասնիկ:
4. Աղբիւր - Անստոյգ, երկբայական:
5. Ասիոյ Պասքեթպոլի ֆետերասիոնի ընդհանուր քարտուղարը:
6. Արեւու ջերմութիւն - Յուցական ածական - Տապալի:
7. Հետք - Հրանիւթ - 1982-ի լաւագոյն Ֆիլմի Օսքարին արժանացած ժապաւէնը:
8. Ռուսերէն՝ այո՛ - Երբեմնի պոլսահայ մեծահարուստներու տրուած պատուանուն - Արական օտար անուն:
9. Գրական ստեղծագործութիւն - Յասմկաքար:
10. Իգական անուն - Ոտք - Յուցական անուն:
11. Այբուբենէն - Իրերայաջորդ գիրեր - Հարսին հայրը՝ փեսային նկատմամբ:
12. Կրկնուած բաղաձայններ - Նման - Սափոր:
13. Ետին դարձած՝ Փրանսացի թենիսվոլմըն - Տարիք:
14. Չայնանիչ - Ֆրանսական գետ:
15. Իգական օտար անուն - Վատ, գձուձ:
16. Պատուար - Իգական օտար անուն - Չայնանիչ:
17. Գոյութիւն ունին - Ամսանուն մը - Անծայր՝ ցնծութիւն:
18. Իգական օտար անուն - Շրջան, հորիզոն:
19. Իրլանտա՝ նախապէս - Կառուցող - Ստացական ածական:
20. Չայնակից գիրեր - Յարմար - Երկամունք:


ՈՒՂՂԱՀԱՅԵԱՑ

1. Դպրոցի մատակարար - Խաշնարած - Զրասէր հաւազգի:
2. Վրան միս ջարդելու տախտակ - Շրջակայք:
3. Հայ գուսան - Կին հետապնդող - Աչք ունեցող:
4. Փաղամ - Յուցական ածական - Ջնջել - Տիրան Չրաքեանի գրչանունը:
5. Սպանիոյ պատմական մարզերէն - Պտուղի աղուամազ - Յորենի հատիկ:
6. Խալանջ - Սաղաւարտի փետրափունջէ գարդ - Ամօթահար - Պարուտակ:
7. Առարկայ - Յաւի ճիչ - Շաւարչ Նարդունիի ծննդավայրը - Եպիսկոպոսական գաւազան:
8. Ճափոնի կղզիներէն - Լոս Անճելոս Լէյքըրզի մարզիկներէն:
9. Հրաւէր - Կանացի օտար շարաթաթերթ - Ծուռ ակռայ:
10. Աւազան - Աստուած - Անգլիական տիտղոս - Արամէացիներէ սերած ժողովուրդ:
11. Արեւու շուրջ դարձող երկնային մարմին - Արտասուել:
12. Յուցական ածական - Մետաքսագործ որդ - Պարպէ՛ - Սեւ ագռաւ:
13. Արական օտար անուն - Յուցական ածական:
14. Իրերայաջորդ տառեր - Ուսումնասիրէ՛ - Փոքր Ասիոյ պատմական երկիրներէն:
15. Հայ կռփամարտիկ - Կրկնուած բաղաձայններ:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15



ԹԻԻ 204 ԽԱՉՔԱՌԻՆ ԼՈՒՐՈՒՄԸ



Ζ.Υ.Ε.Υ.
ΑΛΥΣΙΔΑ

